



Աշխատություն 01(11), մայիս 2011, Երևան, Հայաստան  
Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն (EDRC)

## **Ջերմամատակարարման իրավիճակը և ջեռուցման տարբերակները Հայաստանի բազմաբնակարան շենքերում**

[www.edrc.am](http://www.edrc.am)



Աշխատություն 01 (11), մայիս 2011, Երևան, Հայաստան

Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն (EDRC)

---



Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ

# **Ջերմամատակարարման իրավիճակը Հայաստանի բազմաբնակարան շենքերում (2010-2011թթ. ջեռուցման սեզոնի համար)**

**Տնային տնտեսությունների վիճակագրական  
հետազոտության հաշվետվություն**

**Երևան 2011**

## **Յետազոտական հիմնական խումբ.**

**Գագիկ Թորոսյան, հետազոտության ղեկավար**

**Կարինե Հարությունյան**

**Նունե Օհանյան**

**Բելա Գևորգյան**

**Էդուարդ Դավթյան**

**Անի Մկրտչյան**

**Ավագ Ավագյան**

Յետազոտությունն իրականացվել է Համաշխարհային բանկի Քաղաքային ջեռուցման ծրագրի շրջանակներում:

**«Ջերմամատակարարման իրավիճակը և ջեռուցման տարբերակները Հայաստանի բազմաբնակարան շենքերում»**

Հայաստանի վերականգնվող էներգետիկայի եւ էներգախնայողության հիմնադրամ  
info@r2e2.am, www.r2e2.am

Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն (EDRC), Երևան 2011  
info@edrc.am, www.edrc.am

**Օգտագործված հապավումները**

ԸԱՄ	Ընտրանքի առաջնային միավոր
ՀՀ ԱՎԾ	Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն
ՀՀ ՖԷՆ	Հայաստանի Հանրապետության ֆինանսների և եկոնոմիկայի նախարարություն
ՀՎԷԷՀ	Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ԶԻԳՀ (2005)	Զերմամատակարարման իրավիճակի գնահատման հետազոտություն, 2005թ.
ԶԻԳՀ (2007)	Զերմամատակարարման իրավիճակի գնահատման հետազոտություն, 2007թ.
ԶԻԳՀ (2009)	Զերմամատակարարման իրավիճակի գնահատման հետազոտություն, 2009թ.
ԶԻԳՀ (2010)	Զերմամատակարարման իրավիճակի գնահատման հետազոտություն, 2010թ.
ԶԻԳՀ (2011)	Զերմամատակարարման իրավիճակի գնահատման հետազոտություն, 2011թ.
ՏԶՀԿ	Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն
ՏՏ	Քաղաքային բնակավայրերի բազմաբնակարան շենքի բնակարանում բնակվող տնային տնտեսություն
ՏՏԿԱՀ	Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջական հետազոտություն

## Բովանդակություն

Ներածություն .....	5
Հիմնական եզրահանգումներ.....	8
Բաժին 1. Ջեռուցման և տաք ջրամատակարարման ապահովումը Հայաստանում.....	10
Բաժին 2. Ջեռուցման սեզոնի տևողությունը.....	14
Բաժին 3. Ջեռուցվող մակերեսը.....	15
Բաժին 4. Միջին ջերմաստիճանը .....	18
Բաժին 5. Ջեռուցման և տաք ջրամատակարարման ծախսերը.....	20
Բաժին 6. Ջեռուցման պայմանների պատճառով հիվանդացություններ .....	23
Բաժին 7. Անցումն անվտանգ և մաքուր ջեռուցման.....	27
Բաժին 8. Բավարարվածություն և նախապատվություններ.....	28
Բաժին 9. Ջեռուցման բարելավման հնարավորությունները և սոցիալական համագործակցությունը.....	31
Հավելված 1. «Հայաստանի քաղաքային բնակավայրերի բազմաբնակարան շենքերի ջեռուցման տարբերակների ուսումնասիրություն» հետազոտության մեթոդաբանությունը	38
Հավելված 2. Վերլուծական աղյուսակներ .....	45

## Ներածություն

Ջեռուցման և ջերմամատակարարման իրավիճակի բարելավումն էապես պայմանավորվում է երկրում գազաֆիկացիայի բարձր տեմպերով, բնապահպանության և անվտանգության նկատմամբ ներկայացվող առավել խիստ պահանջներով, ինչպես նաև, վարկավորման մատչելիությամբ:

Այնուհանդերձ, բնակչության դեռևս մի զգալի զանգված ձմռանն արդյունավետ ջեռուցման խնդիր ունի, իսկ անվտանգության, տնտեսական, բնապահպանական և առողջապահական առումներով արդյունավետ և մաքուր ջեռուցմանն անցումը երկրում դեռ երկար տարիների խնդիր է: Այդ ամենի վրա իր ազդեցություն է թողնում նաև համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը, որն իր ուրույն ազդեցությունը թողեց Հայաստանի բնակչության վրա, և դա չէր կարող չանդրադառնալ բնակչության կենսապայմանների վատթարացման վրա, հետևաբար և ջեռուցման և ջերմամատակարարման իրավիճակի վրա: Այդ ամենին գումարվեց նաև 2010 թվականի գարնանը տեղի ունեցած գազի թանկացումը, որը ծանրացրեց բնակչության՝ ջեռուցմանն ուղղվող ծախսերը, և արդյունքում, տարեցտարի գրանցվող անվտանգ ջեռուցմանն անցնող տնային տնտեսությունների թվաքանակի աճը ոչ միայն կանգնեց, այլ սկսեց նվազել:

Տեղի ունեցող փոփոխությունները նկատի ունենալով՝ Էլ ավելի է կարևորվում իրավիճակի պարբերական հետազոտությունը և գնահատումը, ինչը թույլ է տալիս ողջ բնակչության և հատկապես սոցիալապես անապահով և խոցելի խմբերի համար կյանքի որակի և անվտանգության ապահովմանն ուղղված միջոցառումներ ձեռնարկել և արդյունավետ քաղաքականություններ մշակել:

Այդ նպատակին է ուղղված Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի կողմից արդեն, կարելի է ասել, պարբերական դարձած հետազոտությունների նախաձեռնումը:

Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամը գործում է 2006 թվականից: Այն ստեղծվել է ՀՀ կառավարության կողմից որպես ինքնուրույն ՀԿ՝ ՀՀ էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին օրենքի համաձայն: Հիմնադրամի հիմնական նպատակն է դյուրինացնել ներդրումներն էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ոլորտներում, նպաստել Հայաստանում էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի շուկաների զարգացմանը: Կարճ ժամանակահատվածում Հիմնադրամը մեծ հեղինակություն է ձեռք բերել և մեծ դեր է ունեցել Հայաստանում էներգետիկայի կայուն զարգացման գործում: Հիմնադրամը համակողմանի օժանդակություն է ցուցաբերում էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի ծրագրեր նախագծողներին, ներդրողներին, բանկերին, համատիրություններին, հետազոտողներին և այլն: Հիմնադրամը շարունակաբար վերլուծություններ է կատարում՝ բացահայտելով խոչընդոտները և լուծումներ առաջարկելով Կառավարության համապատասխան գործակալություններին:

Հիմնադրամը Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ իրականացնում է մի շարք ծրագրեր, այդ թվում՝ Քաղաքային ջեռուցման ծրագիրը: Ծրագրի նպատակը մաքուր, արդյունավետ, ապահով ու մատչելի ջեռուցման տեխնոլոգիաների կիրառման ընդլայնումն է ՀՀ բազմաբնակարան շենքերում:

Ծրագրի շրջանակներում անցկացվող ամենամյա վիճակագրական ուսումնասիրությունների արդյունքում հրապարակվող «Ջերմամատակարարման իրավիճակը Հայաստանի բազմաբնակարան շենքերում» զեկույցը դարձել է ոլորտի մասնագետների և քաղաքականություն մշակողների կողմից օգտագործվող տեղեկատվության հիմնական

աղբյուրը: Տարեց տարի աճում է ոլորտի շահառուների կողմից Չեկույցի նկատմամբ ունեցած հետաքրքրվածությունը:

Պետք է նկատել, որ մինչ այս հետազոտությունները Հայաստանում ջեռուցման և ջերմամատակարարման իրավիճակի վերաբերյալ հետազոտությունները և տվյալները քիչ էին: Ջեռուցման տարբերակների վերաբերյալ որոշ տեղեկատվություն պարունակում է 2001 թվականի մարդահամարը, որի տեղեկատվության արդիականությունն անշուշտ ցածր է: Ջեռուցման տարբերակների վերաբերյալ որոշ, սակայն խիստ սահմանափակ տեղեկատվություն են պարունակում նաև ՀՀ ԱՎԾ ՏՏԿԱՀ-ները: Սակայն, այդ հետազոտությունները, ըստ էության, ուղղված չեն դրանց և չեն կարող մեծ կիրառություն ստանալ:

Ջերմամատակարարման իրավիճակի վերաբերյալ ընդգրկուն տեղեկատվության հավաքագրման սկիզբը կարելի է համարել 2005 թվականին ՀՀ ՖԷՆ «Ջերմամատակարարման ծրագրեր» ծրագրի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի պատվերով «Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն» (ՏՀՀԿ, EDRC)<sup>1</sup> կողմից իրականացված «Ջերմամատակարարման իրավիճակի գնահատում» քաղաքային բնակավայրերի տևային տնտեսությունների վիճակագրական ընտրանքային հետազոտությունը, որին հաջորդեց 2007, 2009 և 2011 թվականներին արդեն Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի (վերջինիս ստեղծմամբ, նրան էին անցել «Ջերմամատակարարման ծրագրեր» ծրագրի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի գործառույթների հիմնական մասը) պատվերով իրականացված «Ջերմամատակարարման իրավիճակը և ջեռուցման տարբերակները Հայաստանի բազմաբնակարան շենքերում» հետազոտությունները:

2010 թվականին ՄԱԿ-ի Չարգացման Ծրագրի/Գլոբալ Էկոլոգիական Ֆոնդի «Հայաստան. քաղաքային ջեռուցման և տաք ջրամատակարարման էներգաարդյունավետության բարձրացում» ծրագրի կողմից, նկատի ունենալով ճգնաժամի հնարավոր ազդեցությունը, Նույնպես կարևորվեց ոլորտի իրավիճակի գնահատումը, և արդյունքում հետազոտությունն իրականացվեց նրանց նախաձեռնությամբ:

Տևային տնտեսությունների ջեռուցման տարբերակների ուսումնասիրության իրագործման համար 2011 թվականին նախագծվեց և իրականացվեց Ջերմամատակարարման իրավիճակի գնահատման հերթական հետազոտությունը (այսուհետ՝ ՁԻԳՀ(2011), որի արդյունքների հիման վրա մշակվել և հրապարակվել է սույն՝ «Ջերմամատակարարման իրավիճակը և ջեռուցման տարբերակները Հայաստանի բազմաբնակարան շենքերում» հերթական զեկույցը: Չեկույցի հիմնական նպատակն է ներկայացնել Հայաստանի քաղաքային բնակավայրերի բազմաբնակարան շենքերի ջեռուցման առկա պայմանները, գնահատել դրանց բարելավման հնարավորությունները, մատչելի և որակյալ ջեռուցման հնարավորությունները և այլն: Հետազոտության նախաձեռնողը ևս մեկ անգամ Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամն է:

Նկատենք, որ նշված բոլոր հետազոտությունների ընթացքում կիրառված մեթոդաբանությունը թույլ է տալիս ապահովել տարբեր տարիների տվյալների համադրելիությունը և ունենալ քանակական տվյալների դինամիկ շարքեր և վերլուծել իրավիճակի փոփոխությունը և ուժգնությունը: Արդյունքում, առկա է իրավիճակի վերաբերյալ տվյալների ժամանակային շարք վերջին 8 տարիների՝ 2003-04, 2004-05, 2005-06, 2006-07, 2007-08, 2008-09, 2009-10 և 2010-2011 թվականների ջեռուցման սեզոնների համար:

Չեկույցի համապատասխան բաժիններում վերլուծվում են ջեռուցման համար կիրառվող էներգիայի հիմնական աղբյուրները, սարքերը և տաք ջրամատակարարման

<sup>1</sup> Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոնի մասին տե՛ս [www.EDRC.am](http://www.EDRC.am)

տարբերակները, ջեռուցման տևողությունը, ջեռուցվող մակերեսը և ջերմաստիճանը ջեռուցվող տարածքներում, ջեռուցման և տաք ջրամատակարարման ծախսերը, ջեռուցման պատճառով հիվանդությունները, անվտանգ և մաքուր ջեռուցմանն անցման միտումները: Վերջին երկու բաժիններում քննարկվում են ջեռուցման պայմաններից տնային տնտեսությունների գոհունակությունը և նախապատվությունները, ջեռուցման պայմանների բարելավման համար վարկեր վերցնելու պատրաստակամության, էներգախնայողության, համատիրությունների կայացվածության և հարևանների համագործակցությանը վերաբերող հարցեր և այլն:

Ձեկույցին հավելվածների տեսքով կցված են վիճակագրական ընտրանքային հետազոտության ընդհանուր և որոշ արդյունքների, ինչպես նաև, մեթոդաբանության համառոտ նկարագրությունը, նաև վերլուծական աղյուսակներ՝ ըստ զեկույցի բաժինների:



## Հիմնական եզրահանգումներ


- 2010-2011 ջեռուցման սեզոնի ընթացքում, ինչպես նախորդ մի քանի տարիներին, բնական գազը շարունակում է գերակշռել որպես բնակարանների ջեռուցման հիմնական աղբյուր, թեպետ վերջին երկու ձմեռների ընթացքում դրա օգտագործման մակարդակը փոքր-ինչ կրճատվել է՝ այս ձմռանը կազմելով 69.8 տոկոս 2008-2009 ձմռան 72.5 տոկոսի դիմաց: Այդ կրճատմանը զուգընթաց աճել է էլեկտրաէներգիայի և վառելիքայտի կիրառումը:
- Հայաստանի բնակչությունը դեռևս շարունակում է զուգահեռաբար օգտագործել ջեռուցման երկու աղբյուր: Ձմռան ամիսներին բնակարանը ջեռուցած SS-ների 26.1 տոկոսը հիմնական ջեռուցման աղբյուրի հետ մեկտեղ ջեռուցել են նաև էլեկտրաէներգիայով, 11 տոկոսը՝ բնական գազով, 1.7 տոկոսը՝ վառելիքայտով: Հիմնականում էլեկտրաէներգիայով ջեռուցողների գրեթե կեսը՝ 45.7 տոկոսը, որպես ջեռուցման երկրորդական աղբյուր կիրառել է բնական գազ, իսկ 2.6 տոկոսը՝ վառելիքայտ: Բնական գազը որպես ջեռուցման հիմնական աղբյուր կիրառող SS-ների 33.9 տոկոսը որպես ջեռուցման երկրորդական աղբյուր կիրառել է էլեկտրաէներգիա, իսկ 1.5 տոկոսը՝ վառելիքայտ:
- Տարեցտարի ավելանում է անվտանգ ջեռուցման տարբերակ կիրառող SS-ների քանակը. պահպանվում է ոչ գործարանային և ինքնաշեն սարքավորումներից դեպի ջեռուցման ավելի անվտանգ և մաքուր տարբերակներին անցման աճի միտումը: Բնական գազով և էլեկտրաէներգիայով ջեռուցող SS-ները փոխարինում են ինքնաշեն վառարանները գործարանային արտադրության սարքավորումներով: Նախորդ տարվա համեմատ 2.3 և 5.2 տոկոսային կետով աճել է համապատասխանաբար բնական գազի և էլեկտրաէներգիայի գործարանային սարքերի կիրառումը:
- Վերջին տարիների շարունակական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ աճել է այն SS-ների թիվը, ով կենցաղային նպատակով (այդ թվում՝ լոգանքը) շուրջ տաքացրել է անհատական ջեռուցման կաթսայով՝ 2010-2011 ձմռանը՝ 26.1 տոկոս: Չուգահեռաբար, դրսևորվել է էլեկտրական ինքնաշեն ջրատաքացուցիչով, գեյզերով, փայտի վառարանով և գազօջախով ջրի տաքացման նվազման միտում:
- Որոշակի հետընթաց ենք ապրել բնակարանն ամբողջությամբ ջեռուցած SS-ների քանակի առումով. կրճատվել է նրանց կշիռը՝ կազմելով 62.8 տոկոս (կրճատվել է 6.6 տոկոսային կետով): Մասնավորապես, բնական գազով ջեռուցող SS-ների շուրջ 70 տոկոսը և էլեկտրաէներգիայով ջեռուցողների 51 տոկոսն ապահովել են բնակարանի ջեռուցման ամբողջականությունը:
- Ջեռուցման տարբերակների շրջանում ամենաբարձր և կայուն ջերմաստիճան հնարավոր է եղել ապահովել կենտրոնացված ջեռուցման դեպքում՝ միջինում 20.1 աստիճան, թեպետ ջեռուցման այս տարբերակը կիրառվել է SS-ների ընդամենը 0.5 տոկոսի կողմից: Հանրապետությունում միջին ջերմաստիճանը բնակարաններում ձմռան ամիսների ընթացքում կազմել է 17.7 աստիճան՝ փոքր-ինչ ավելի ցածր, քան նախորդ տարի՝ 17.9 աստիճան: Այն բնակարաններում, որտեղ երեխաներ են բնակվել, միջին ջերմաստիճանն ավելի բարձր է եղել՝ 18 աստիճան, քան առանց երեխաների SS-ների դեպքում՝ 17.4 աստիճան:
- Բնակարանում ջեռուցման պայմաններից բավարարվածությունն այս ձմռանը նախորդ տարվա համեմատ նվազել է: Ջեռուցումից լիովին բավարարված են եղել SS-ների 28.6 տոկոսը, որը 2.1 տոկոսային կետով պակաս է եղել նախորդ ձմռան ցուցանիշից:
- SS-երից շատերի համար նախընտրելի ջեռուցման տարբերակը շարունակում է մնալ անհատական ջեռուցման կաթսան՝ SS-ների 52.2 տոկոսի համար: Աճել է նաև այն SS-ների թիվը, ովքեր կնախընտրեին ունենալ կենտրոնացված ջեռուցում և լոկալ-

- կոլեկտիվ կաթսա՝ ՏՏ-ների համապատասխանաբար 11.3 և 10.3 տոկոսը: Նման նախընտրության հիմնական պատճառները հանդիսանում են անվտանգությունը և բավարար ջերմությամբ ապահովելու ունակությունը: Ընդհանուր առմամբ, շարունակական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բնակչությունը տարեցտարի ձգտում է ավելի անվտանգ և մաքուր ջեռուցման տարբերակների:
- 2010-2011 ձմռան ընթացքում բնակարանի ջեռուցման վրա կատարված միջին ամսական ծախսը կազմել է 27,600 դրամ՝ 39.5 տոկոսով աճելով նախորդ տարվա համեմատ:
  - Որոշակի աճ է գրանցվել ջեռուցման սեզոնի ընթացքում ջեռուցման պայմաններից (անբավարար ջեռուցումից և աղտոտվածությունից) բնակչության հիվանդությունների հետ կապված: ՏՏ-ների 44.5 տոկոսում եղել են հիվանդացության դեպքեր՝ կապված անբավարար ջեռուցման հետ, իսկ 4.9 տոկոսում՝ կապված ջեռուցման աղտոտվածության հետ: Նախորդ տարվա համեմատ, ջեռուցման պայմաններից ՏՏ-ում հիվանդացության մակարդակն աճել է: Ընդ որում, Երևանում հիվանդացության մակարդակն աճել է 1.3 տոկոսային կետով, մինչդեռ մարզերում՝ 9.9 տոկոսային կետով: Այն ՏՏ-ներում, որտեղ առկա են եղել երեխաներ կամ տարեցներ, հիվանդացության մակարդակն ավելի բարձր է եղել:
  - Բարձրանում է համատեղ կաթսայատան կառուցման հնարավորությունը դրական գնահատող ՏՏ-ների կշիռը՝ ընթացիկ տարում այն կազմել է 19.5 տոկոս: ՏՏ-ների 17.6 տոկոսի կարծիքով դա հնարավոր է կառուցման ոչ մեծ ծախսերի դեպքում, իսկ 14.3 տոկոսը այդ գաղափարը համարել է իրատեսական այն դեպքում, եթե բնակիչները համոզված լինեն ջեռուցման այդ տարբերակի ավելի մատչելի լինելու մեջ:

## Բաժին 1. Ջեռուցման և տաք ջրամատակարարման ապահովումը Հայաստանում

Վերջին մի քանի տարիների ընթացքում բնական գազով բնակարանը ջեռուցող ընտանիքների թիվը շարունակաբար աճել է՝ 2008-2009 ձմռանն արդեն կազմելով 72.5 տոկոս: Սակայն, հաջորդ երկու տարիների ընթացքում այդ ցուցանիշը փոքր-ինչ կրճատվել է. բնական գազը փոխարինվել է էլեկտրաէներգիայով և վառելիք-փայտով:

**Գծապատկեր 1. Ջեռուցման համար էներգիայի հիմնական աղբյուրների կիրառման դինամիկան անցած յոթ տարիներին, տոկոս բոլոր SS-ների նկատմամբ**




Աղբյուրը՝ ՋԻԳՀ(2011)

անզամ պակաս, քան այս ձմռանը:

Բնական գազի կիրառման կրճատմանը համընթաց աճել է էլեկտրաէներգիայի և վառելիքփայտի կիրառումը՝ կազմելով 2010-2011 ձմռանը համապատասխանաբար 22.8 տոկոս (աճելով 0.8 տոկոսային կետով) և 5.3 տոկոս (աճելով 1.1 տոկոսային կետով):

Բնական գազի փոխարինումն էներգիայի այլ աղբյուրով հիմնականում պայմանավորված է գազի սակագնի, և արդյունքում՝ SS-ների կողմից ջեռուցման վրա կատարվող ծախսերի աճով:

**Գծապատկեր 2. Ջեռուցման հիմնական աղբյուրները 2010-2011 և նախորդող ձմռանն ըստ բնակավայրերի, տոկոս բնակավայրի ջեռուցող SS-ների նկատմամբ**



Աղբյուրը՝ ՋԻԳՀ(2011) և ՋԻԳՀ(2010)


Բնակարանը վառելիքփայտով ջեռուցող SS-ների թիվն աճել է թե՛ Երևանում, թե՛ մարզերում՝ 2010-2011 ձմռանը կազմելով համապատասխանաբար 3.2 և 7.9 տոկոս նախորդ ձմռան 1.7 և 7.2 տոկոսի համեմատ:

Գծապատկեր 1-ում ներկայացվում է ջեռուցման հիմնական աղբյուրների դինամիկան վերջին 7 տարիների համար: Թեպետ բնական գազով ջեռուցողների կշիռն այս ձմռանը կազմել է 69.8 տոկոս՝ նախորդ ձմռան համեմատ կրճատվելով 1.1 տոկոսային կետով, բնական գազը շարունակում է գերակշռել ջեռուցման տարբերակների մեջ: 2004-2005 ձմռանը դրա կիրառումը կազմել է ընդամենը 30 տոկոս՝ շուրջ 2.3

Բնական գազի օգտագործումը 2010-2011 ձմռանը նախորդ տարվա համեմատ Երևանում կրճատվել է 2 տոկոսային կետով և կազմել 64.5 տոկոս, իսկ մարզերում գրեթե չի փոփոխվել՝ կրճատվելով ընդամենը 0.2 տոկոսային կետով՝ կազմելով 76.3 տոկոս (Գծապատկեր 2): Երևանում էլեկտրաէներգիայով ջեռուցողների կշիռը շուրջ երկու անգամ գերազանցում է մարզերում էներգիայի այդ աղբյուրը կիրառողների կշիռն՝ համապատասխանաբար 30.1 և 13.7 տոկոս:

Ստորև՝ Գծապատկեր 3-ում, ներկայացվում է Էներգիայի հիմնական տեսակների կիրառումը ՀՀ մարզերում:

**Գծապատկեր 3. 2010-2011 ձմռանը ջեռուցման համար Էներգիայի հիմնական աղբյուրների կիրառումն ըստ մարզերի, տոկոս տվյալ մարզի մեջ**




Աղբյուրը՝ ԶԻԳՀ(2011)

Բնական գազի կիրառումը հատկապես բարձր է Շիրակի, Գեղարքունիքի և Արագածոտնի մարզերում՝ համապատասխանաբար 90, 88.8 և 85 տոկոս: Այդ մարզերում Էլեկտրաէներգիայով ջեռուցման մակարդակը զգալիորեն զիջել է մյուս մարզերին: Շիրակի մարզում Էլեկտրաէներգիայով ջեռուցել են ՏՏ-ների ընդամենը 2.2 տոկոսը, մինչդեռ Սյունիքի մարզում այդ ցուցանիշի արժեքը կազմել է 28 տոկոս: Ընդ որում, Սյունիքի մարզում բնական գազով ջեռուցողների կշիռն այլ մարզերի համեմատ ամենացածրն է եղել՝ 59.3 տոկոս: Տավուշի մարզում վառելափայտը որպես բնակարանի ջեռուցման հիմնական աղբյուր կիրառող ՏՏ-ները կազմել են 21.6 տոկոս, մինչդեռ Վայոց Ձորում ջեռուցման այդ տարբերակն ընդհանրապես չի կիրառվել:

Բնակարանը չի ջեռուցել ՏՏ-ների ընդամենը 0.6 տոկոսը՝ նախորդ տարվա 2 տոկոսի համեմատ կրճատվելով ավելի քան 3 անգամ: Բնակարանը չեն ջեռուցել Լոռու մարզի բազմաբնակարան շենքերում բնակվող ՏՏ-ների 1.1 տոկոսը, իսկ վեց մարզերում նման ՏՏ-ներ չեն եղել: Բնակարանի չջեռուցման հիմնական պատճառը, ինչպես և նախորդ ձմռանը, հանդիսացել է ֆինանսական միջոցների սղությունը: Բացի այդ, որոշ ՏՏ-ներ չեն ջեռուցել ձմռանն այդ բնակարանում չբնակվելու պատճառով:

**Գծապատկեր 4. 2010-2011 ձմռանը ջեռուցման երկրորդական տարբերակների համար կիրառվող Էներգիայի տեսակն ըստ հիմնական տարբերակի, տոկոս տվյալ հիմնական տարբերակով ջեռուցող ՏՏ-ների նկատմամբ**



Աղբյուրը՝ ԶԻԳՀ(2011)


հնչպես և նախորդ տարիներին, 2010-2011 ձմռանը ևս ջեռուցման հիմնական աղբյուրի հետ մեկտեղ SS-ները կիրառել են նաև երկրորդական աղբյուր: Գծապատկեր 4-ում ներկայացվում են SS-ների կողմից կիրառված ջեռուցման երկրորդական աղբյուրներն ըստ SS-ների կողմից բնակարանի ջեռուցման հիմնական աղբյուրի:

Ձմռան ամիսներին բնակարանը ջեռուցած (ջեռուցման հիմնական աղբյուր ունեցող) SS-ների 26.1 տոկոսը կիրառել են նաև էլեկտրաէներգիա, 11 տոկոսը՝ բնական գազ, 1.7 տոկոսը՝ վառելիքայտ՝ որպես էներգիայի երկրորդական աղբյուր: Էլեկտրաէներգիայով ջեռուցողների գրեթե կեսը՝ 45.7 տոկոսը, որպես ջեռուցման երկրորդական աղբյուր կիրառել է բնական գազ, իսկ 2.6 տոկոսը՝ վառելիքայտ:

Բնական գազը որպես ջեռուցման հիմնական աղբյուր կիրառող SS-ների մեկ երրորդը որպես ջեռուցման երկրորդական աղբյուր կիրառել է էլեկտրաէներգիա, իսկ 1.5 տոկոսը՝ վառելիքայտ: Նշենք, որ ջեռուցման այլ հիմնական տարբերակի դեպքում որպես երկրորդական էներգիայի աղբյուր է հանդիսացել միայն էլեկտրաէներգիան՝ 72.1 տոկոսի դեպքում: Նախորդ ձմռան համեմատ պատկերը նշանակալի փոփոխությունների չի ենթարկվել:

Վերջին տարիների ընթացքում շարունակաբար կրճատվել է գազի ինքնաշեն վառարանով բնակարանը ջեռուցող SS-ների կշիռը՝ 2009-2010 ձմռանը կազմելով 0.9 տոկոս 2006-2007 ձմռան 1.9 տոկոսի դիմաց (Գծապատկեր 5): Սա դրական տեղաշարժ էր, քանի որ գազի ինքնաշեն վառարանն իրենից ներկայացնում է բավականին վտանգավոր ջեռուցման սարք: Սակայն, այս ձմռանն այդ սարքերի կիրառումը կրկին աճել է՝ կազմելով 1.3 տոկոս: Նույն պատկերն է փայտի վառարանների դեպքում. 2010-2011 ձմռանը բնակարանն այդ սարքով ջեռուցողների կշիռը նախորդ տարվա համեմատ աճել է՝ կազմելով 5.5 տոկոս (նախորդ ձմռանը՝ 4.1 տոկոս):

**Գծապատկեր 5. Ջեռուցման համար կիրառվող հիմնական սարքերը վերջին հինգ տարիների ընթացքում, տոկոս բնակարանը ջեռուցող SS-ների մեջ**




Աղբյուրը՝ ՋԻԳՀ(2011), ՋԻԳՀ(2010), ՋԻԳՀ(2009) և ՋԻԳՀ(2007)

2006-2009 թվականների ընթացքում գազի գործարանային վառարանների օգտագործումը շարունակաբար աճել է: Սակայն, վերջին երկու տարիների ընթացքում այդ սարքով բնակարանը ջեռուցողների կշիռը փոքր-ինչ կրճատվել է՝ 2010-2011 ձմռանը կազմելով 38.6 տոկոս: Կարելի է եզրակացնել, որ այս վառարանները դիտվել են որպես անարդյունավետ միջոց SS-ների կողմից: Միակ ջեռուցման սարքը, որի կիրառությունը շարունակաբար աճել է վերջին 5 տարվա ընթացքում, անհատական ջեռուցման կաթսան է: Այս ձմռանը դրա օգտագործումը կազմել է 28.1 տոկոս՝ աճելով 2006-2007 ձմռան համեմատ շուրջ 5.6 անգամ: Սա վկայում է այն մասին, որ բնակիչների կողմից ջեռուցման այս տարբերակը շարունակում է համարվել արդյունավետ և նախընտրելի:

2010-2011 ձմռանն ավելացել է նաև գործարանային արտադրության էլեկտրական սարքերի կիրառումը՝ կազմելով 11.7 տոկոս (նախորդ ձմռանը՝ 10.5 տոկոս):


Ջեռուցման սարքերի կիրառումը SS-ների կողմից տարբերվում է ըստ քվանտիլային խմբերի և SS-ների կողմից իրենց սոցիալական վիճակի վերաբերյալ գնահատականի: Այսպես, ջեռուցման անհատական կաթսան, որը համարվում է առավել մեծ ծախս պահանջող ջեռուցման տարբերակ, գերակշռում է ամենաբարձր եկամտային (սպառման) խմբի SS-ների կիրառած ջեռուցման սարքերի մեջ՝ 51.7 տոկոս, և ապահովված ընտանիքների մոտ՝ 59.6 տոկոս: Ըստ եկամուտների նվազման այդ կշիռը փոքրանում է՝ Քվանտիլ 1-ի SS-ների մոտ կազմելով 9.8 տոկոս, իսկ իրենց ծայրահեղ աղքատ գնահատած SS-ների մոտ՝ 7.5 տոկոս:

**Գծապատկեր 6. Ջեռուցման համար կիրառվող հիմնական սարքերն ըստ քվանտիլային խմբերի, տոկոս**



Աղբյուրը՝ ՁԻԳՀ(2011)

**Գծապատկեր 7. Կենցաղային նպատակով օգտագործվող ջրի (ներառյալ լոգանքը) տաքացման միջոցը, տոկոս**



Աղբյուրը՝ ՁԻԳՀ(2011), ՁԻԳՀ(2010), ՁԻԳՀ(2009), ՁԻԳՀ(2007)


Ներկայացված են կենցաղային նպատակով (ներառյալ լոգանքը) ջրի տաքացման հիմնական սարքերը վերջին 5 ձմեռների ընթացքում: Այսպես, վերջին տարիների ընթացքում շարունակաբար աճել է այն SS-ների թիվը, ովքեր ջուրը տաքացրել են անհատական ջեռուցման կաթսայով՝ 2010-2011 ձմռանը՝ 26.1 տոկոսը: Ակնհայտ է էլեկտրական ինքնաշեն ջրատաքացուցիչով, գեյզերով, փայտի վառարանով և գազօջախով ջուր տաքացնող SS-ների թվի նվազման միտումը: Բոլոր այս սարքերն աստիճանաբար փոխարինվել են անհատական ջեռուցման կաթսայով և գազի ջրատաքացուցիչով (կալոնկա), թեպետ վերջին երկու տարիների ընթացքում վերջինիս կիրառումը փոքր-ինչ կրճատվել է՝ 2010-2011 ձմռանը կազմելով 27 տոկոս 2008-2009 ձմռան 28.7 տոկոսի դիմաց:

Կենցաղային նպատակով ջրի տաքացման հիմնական միջոցների բաշխումը զգալիորեն տարբեր է Երևանում և մարզերում (Գծապատկեր 8):

Գծապատկեր 7-ում, ներկայացված են կենցաղային նպատակով (ներառյալ լոգանքը) ջրի տաքացման հիմնական սարքերը վերջին 5 ձմեռների ընթացքում: Այսպես, վերջին տարիների ընթացքում շարունակաբար աճել է այն SS-ների թիվը, ովքեր ջուրը տաքացրել են անհատական ջեռուցման կաթսայով՝ 2010-2011 ձմռանը՝ 26.1 տոկոսը: Ակնհայտ է էլեկտրական ինքնաշեն ջրատաքացուցիչով, գեյզերով, փայտի վառարանով և գազօջախով ջուր տաքացնող SS-

Երևանում գերակշռում են ավելի առաջադեմ տարբերակները՝ անհատական ջեռուցման կաթսա, էլեկտրական սարք (գեյզեր) և գազով ջրատաքացուցիչ: Անհատական ջեռուցման

**Գծապատկեր 8. Կենցաղային նպատակով օգտագործվող ջրի (ներառյալ լոգանքը) տաքացման հիմնական միջոցներն ըստ բնակավայրերի, տոկոս տաք ջուր օգտագործող ընդամենը SS-ների մեջ**




Աղբյուրը՝ ՁԻԳՀ(2011)

կաթսայով ջուրը տաքացնող SS-ները Երևանում կազմում են 36.9 տոկոս, մինչդեռ մարգեթում՝ 13.1 տոկոս: Մարգեթում SS-ների շուրջ մեկ երրորդը տաք ջուրն ապահովում է գազօջախի, իսկ 2.3 տոկոսը՝ փայտի վառարանի միջոցով: Մինչդեռ Երևանում, նշված երկու տարբերակով ջուրը տաքացնողների կշիռները կազմում են համապատասխանաբար 7 և 0.4 տոկոս: Ինքնաշեն էլեկտրական ջրատաքացուցիչի կիրառումն ըստ բնակավայրերի աննշան չափով է տարբերվում:

**Բաժին 2. Ջեռուցման սեզոնի տևողությունը**

Ջեռուցման սեզոնի միջին տևողությունը նախորդ տարվա համեմատ գրեթե չի փոփոխվել: Բնակարանը 4-5 ամիս ջեռուցած SS-ները կազմել են 68.4 տոկոս՝ նախորդ ձմռան 66.6 տոկոսի դիմաց, իսկ մինչև 3 ամիս ջեռուցողները կրճատվել են 1.9 տոկոսային կետով՝

**Գծապատկեր 9. SS-ների բաշխումն ըստ ջեռուցման սեզոնի երկարության, տոկոս տվյալ բնակավայրի ընդամենի նկատմամբ**




Աղբյուրը՝ ՁԻԳՀ(2011)

կազմելով 10.4 տոկոս (Գծապատկեր 9): Մարգեթում 6 ամիս և ավելի ջեռուցած SS-ների կշիռը կրճատվել է նախորդ ձմռան համեմատ: Սա կարելի է մեկնաբանել SS-ների կողմից բնակարանի ավելի խնայողաբար ջեռուցմամբ և համեմատաբար մեղմ ձմեռվա առկայությամբ: Ինչպես և նախորդ ձմռանը, այս տարի ևս Երևանում մինչև 3 ամիս ջեռուցողների կշիռը գերազանցել է մարգեթի նույն ցուցանիշը, իսկ 6 ամիս և ավելի ջեռուցողները՝ զիջել:

Ջեռուցման սեզոնի տևողությունը տարբերվել է ըստ մարգեթի, ինչը տրամաբանական է՝ հաշվի առնելով կլիմայական տարբերությունները: Ինչպես և նախորդ ձմռանը, 6 ամիս և ավելի ջեռուցողները գերակշռել են Գեղարքունիքի և Շիրակի մարգեթում՝ համապատասխանաբար 86.2 և 82.7 տոկոս: Երևանում, Արարատի և Արմավիրի մարգեթում հիմնականում ջեռուցել են 4-5 ամիս:

**Գծապատկեր 10. ՏՏ-ների բաշխումն ըստ շեռուցման սեզոնի երկարության, տոկոս տվյալ մարզի ընդամենի նկատմամբ**




Աղբյուրը՝ ՁԻԳՀ(2011)

Մինչև 3 ամիս շեռուցել են Վայոց Ձորի մարզի 27.3 տոկոսը և Երևանի ՏՏ-ների 14.8 տոկոսը: Ինչպես և նախորդ ձմռանը, այս տարի ևս Գեղարքունիքի մարզում բացակայում են ՏՏ-ները, որոնք 3 ամսից պակաս են շեռուցել:


**Բաժին 3. Ձեռուցվող մակերեսը**

**Գծապատկեր 11. Բնակարանի շեռուցման ամբողջականությունն ըստ էներգիայի տեսակի, տոկոս**



Աղբյուրը՝ ՁԻԳՀ(2011)

**Գծապատկեր 12. Ձեռուցվող սենյակների քանակն ըստ բնակարանի սենյակների թվի, տոկոս տվյալ տիպի բնակարանների մեջ**



Աղբյուրը՝ ՁԻԳՀ(2011)


2010-2011 ձմռանը բնակարանն ամբողջությամբ շեռուցած ՏՏ-ները կազմել են 62.8 տոկոս՝ նախորդ տարվա համեմատ կրճատվելով շուրջ 6.6 տոկոսային կետով (Գծապատկեր 11):

Ի տարբերություն նախորդ ձմռան, այս ձմռանը բնակարանն ամբողջությամբ շեռուցած ՏՏ-ների կշիռը Երևանում ավելի փոքր է եղել, քան մարզերում (համապատասխանաբար 61.7 և 64.1 տոկոս):

Բնակարանի շեռուցման ամբողջականությունը տարբերվել է ըստ կիրառված շեռուցման տարբերակի: Մասնավորապես, բնական գազով շեռուցող ՏՏ-ների շուրջ 70 տոկոսն ապահովել է բնակարանի շեռուցման ամբողջականությունը: Սա գլխավորապես պայմանավորված է նրանով, որ բնական գազով շեռուցող ՏՏ-ների շուրջ 40 տոկոսը բնակարանում ունի անհատական շեռուցման կաթսա, իսկ այդ տարբերակի դեպքում սովորաբար շեռուցվում են բնակարանի բոլոր սենյակները:




**Գծապատկեր 13. Բնակարանի ջեռուցման ամբողջականությունն ըստ աղքատության սուբյեկտիվ գնահատականների և եկամտային խմբերի, տոկոս**




Աղբյուրը՝ ՁԻԳՀ(2011)

**Գծապատկեր 14. Բնակարանի ջեռուցման ամբողջականությունն ըստ երեխաների և ծերերի առկայության, տոկոս**



Աղբյուրը՝ ՁԻԳՀ(2011)

**Գծապատկեր 15. Խոհանոցի ջեռուցումն ըստ էներգիայի տեսակի, տոկոս**



Աղբյուրը՝ ՁԻԳՀ(2011)

զգայուն են բնակարանի ջերմության սկատմամբ, և հետևաբար ջեռուցման սկատմամբ պահանջներն այլ են: Ընդ որում, 1 երեխա և 3-ից ավել երեխա ունեցող SS-ների դեպքում բնակարանի ջեռուցման ամբողջականությունը գրեթե նույնն է եղել, այն բացառությամբ, որ

Նշենք, որ նախորդ ծմռանը այս պատկերը նույնն է եղել:

Գծապատկեր 12-ում ներկայացվում է բնակարանի ջեռուցման ամբողջականությունն ըստ բնակարանների սենյակների թվի: Այսպես, ամբողջությամբ ջեռուցվել են 2 սենյակից բաղկացած բնակարանների 67.1 տոկոսը, երեք սենյակից բաղկացած բնակարանների 62.6 տոկոսը և 4 և ավելի սենյակներ ունեցող բնակարանների 48.6 տոկոսը:

Ինչպես տեսնում ենք, մեծ բնակարաններում ջեռուցման ամբողջականությունն ապահովելն ավելի դժվար է՝ կապված ֆինանսական և տեխնիկական խնդիրների հետ:

Իրենց ապահովված համարող SS-ների գերազանց մեծամասնությունը՝ 85.7 տոկոսը, բնակարանը ջեռուցել են ամբողջությամբ, մինչդեռ ծայրահեղ աղքատների՝ ընդամենը 30.4 տոկոսը: Նույն միտումն է նաև ըստ եկամտային (սպառման) խմբերի պատկանելիության. Զվանտիլ 5-ին պատկանող SS-ների 56.4 տոկոսը ամբողջությամբ ջեռուցել է բնակարանը, մինչդեռ Զվանտիլ 1-ում՝ SS-ների 10.2 տոկոսը: Բնակարանների ջեռուցման ամբողջականությունն աճում է SS-ների եկամուտների աճին զուգահեռ:


Բնակարանն ամբողջությամբ ջեռուցել են երեխաներ ունեցող SS-ների 71 տոկոսը, մինչդեռ, երեխաների բացակայության պարագայում՝ SS-ների 59.5 տոկոսը: Սա պայմանավորված է նրանով, որ երեխաներն ավելի

բազմազավակ ընտանիքների 1.2 տոկոսը բնակարանը չեն ջեռուցել, այն դեպքում, երբ մեկ երեխա ունեցող SS-ների դեպքում այդ ցուցանիշը երկու անգամ պակաս է եղել:

Տարեց անդամներ ունեցող SS-ների 61 տոկոսն է բնակարանը ջեռուցել ամբողջությամբ: Ի տարբերություն այդ SS-ների, տարեց անդամներ չունեցող SS-ների ավելի մեծ՝ 65.6 տոկոսն է ապահովել բնակարանի ամբողջական ջեռուցումը:

Որպես բնակարանի ջեռուցման պայմանները սկարագրող երևույթ կարելի է դիտարկել նաև խոհանոցի և բաղնիքի ջեռուցումը: Այսպես, 2010-2011 ձմռանը խոհանոցը ջեռուցել է SS-ների 67.4 տոկոսը: Նախորդ ձմռան համեմատ այս ցուցանիշի գծով փոփոխություն գրեթե տեղի չի ունեցել (67.7 տոկոս):


**Գծապատկեր 16. Բաղնիքի ջեռուցումն ըստ էներգիայի աղբյուրի տեսակի, տոկոս**



Աղբյուրը՝ ՁԻԳՀ(2011)

ջեռուցման կաթսայով բնակարանը ջեռուցելու դեպքում խոհանոցը սովորաբար ջեռուցվում է, իսկ գազօջախով ջեռուցելու դեպքում խոհանոցը ջեռուցվում է ինքնըստինքյան (երկու դեպքում էլ ջեռուցման աղբյուրը բնական գազն է):

**Գծապատկեր 17. Բնակարանների սենյակների ջեռուցումը վերջին 4 ձմեռների ընթացքում, տոկոս տվյալ սենյակն ունեցող ընդամենը բնակարանների մեջ**



Աղբյուրը՝ ՁԻԳՀ(2011), ՁԻԳՀ(2010), ՁԻԳՀ(2009) և ՁԻԳՀ(2007)

սենյակը, ննջասենյակները և բաղնիքը ջեռուցող SS-ների թիվը: Սակայն 2010-2011 ձմռանը այդ տոկոսը փոքր-ինչ կրճատվել է. ինչպես նշվել է վերևում, բնակարանների ջեռուցման ամբողջականությունը կրճատվել է նախորդ տարվա համեմատ:

Երևանում և մարզերում խոհանոցը ջեռուցած SS-ների կշիռը տարբերվել է շուրջ 2 տոկոսային կետով՝ Երևանում 66.6 և մարզերում՝ 68.5 տոկոս: Ի տարբերություն բնակավայրերի, ըստ ջեռուցման տարբերակի այս ցուցանիշը զգալիորեն տարբերվում է: Մասնավորապես, բնական գազով ջեռուցողների 75.8 տոկոսի դեպքում խոհանոցը ջեռուցվել է, մինչդեռ վառելիքափայտի դեպքում՝ 39.3 տոկոսը: Սա թերևս պայմանավորված է նրանով, որ անհատական

բնակարանների 45.6 տոկոսում բաղնիքը ջեռուցվել է, ընդ որում, ինչպես և խոհանոցի դեպքում, այստեղ ևս ըստ բնակավայրի ցուցանիշի արժեքը գրեթե չի փոփոխվում, և փոփոխվում է ըստ ջեռուցման աղբյուրի:


Բնական գազով ջեռուցող SS-ների 53.5 տոկոսը ջեռուցել է բաղնիքը, իսկ էլեկտրաէներգիայով և վառելիքափայտով ջեռուցվող բնակարանների դեպքում՝ համապատասխանաբար 22 և 26.6 տոկոսը:

Նախորդ 3 ձմեռների ընթացքում շարունակաբար աճել է հյուրասենյակների ջեռուցման ցուցանիշը:

### Բաժին 4. Միջին ջերմաստիճանը

Այս ձմռանը, բնակարաններում միջին ջերմաստիճանը կազմել է 17.7 աստիճան՝ փոքր-ինչ ավելի ցածր, քան նախորդ տարի՝ 17.9 աստիճան:

**Գծապատկեր 18. Բնակարանների միջին ջերմաստիճանը հունվար ամսին ըստ բնակավայրերի և ջեռուցման համար կիրառվող էներգիայի հիմնական տեսակի, C°**




Աղբյուր՝ ՁԻԳՀ(2011)

աստիճան:

Ընդհանրապես չջեռուցվող բնակարաններում միջինում եղել է ընդամենը 7 աստիճան: Բնակարաններում միջին ջերմաստիճանը կախված է եղել ջեռուցման կիրառվող սարքից (Գծապատկեր 19):

**Գծապատկեր 19. Բնակարանների միջին ջերմաստիճանն ըստ ջեռուցման համար կիրառվող հիմնական սարքի, C°**




Աղբյուր՝ ՁԻԳՀ(2011)

Այսպես, կենտրոնացված ջեռուցման դեպքում բնակարաններում ապահովվել է միջինում 21 աստիճան, ջեռուցման անհատական կաթսաների դեպքում՝ 19.6 աստիճան: Ամենաանարդյունավետ ջեռուցման տարբերակներն են հանդիսացել գազօջախը և փայտի վառարանը՝ ապահովելով համապատասխանաբար 13 և 14.3 աստիճան: Գազի ինքնաշեն վառարանի դեպքում նույնպես բնակարաններում ջերմաստիճանը բավականին ցածր է եղել՝ 14.7 աստիճան: Սա պայմանավորված է թե՛ սարքերի անարդյունավետությամբ, թե՛ այդ SS-ների եկամուտների ցածր մակարդակով (բնակարանը ջեռուցել են խիստ խնայողաբար):


Գծապատկեր 20-ում ներկայացվում է բնակարանների միջին ջերմաստիճանն ըստ երեխաների և տարեց անդամների առկայության:

**Գծապատկեր 20. Բնակարանների միջին ջերմաստիճանն ըստ ՏՏ-ներում երեխաների և տարեցների առկայության, C<sup>0</sup>**




Աղբյուրը՝ ՁԻԳԳ(2011)

**Գծապատկեր 21. Բնակարանների միջին ջերմաստիճանն ըստ քվանտիլային խմբերի, C<sup>0</sup>**



Աղբյուրը՝ ՁԻԳԳ(2011)

**Գծապատկեր 22. Բնակարանում միջին ջերմաստիճանի խմբերի բաշխումն ըստ բնակավայրերի և շեռուցման համար էներգիայի առանձին տեսակների, տոկոս**



Աղբյուրը՝ ՁԻԳԳ(2011)

ջեռուցում ունեցող ՏՏ-ները:

Այն բնակարաններում, որտեղ երեխաներ են բնակվել, միջին ջերմաստիճանն ավելի բարձր է եղել՝ 18 աստիճան, քան առանց երեխաների ՏՏ-ների դեպքում՝ 17.4 աստիճան: Սակայն հարկ է նշել, որ 3 և ավելի երեխաների դեպքում բնակարանների միջին ջերմաստիճանը նույնն է եղել, ինչ այն բնակարաններում, որտեղ երեխաներ չեն բնակվել:

Տարեց անդամ չունեցող ՏՏ-ների բնակարաններում միջին ջերմաստիճանը եղել է 17.7 աստիճան, գրեթե նույնը, ինչ տարեցների բացակայության դեպքում:

Ինչպես արդեն վերլուծվել է նախորդ բաժիններում, բնակարանի շեռուցման պայմանները մեծապես կախված են ՏՏ-ների եկամտի (սպառման) մակարդակից: Եկամտային ամենաբարձր խմբում (Քվանտիլ 5) գտնվող ՏՏ-ների բնակարաններում միջին ջերմաստիճանը եղել է 19.1 աստիճան, մինչդեռ ամենացածր եկամտային խմբի ՏՏ-ների մոտ՝ 15.5 աստիճան:

Երևանում ՏՏ-ների կեսից ավելի մոտ (53 տոկոս) բնակարաններում եղել է տաք՝ 19 աստիճանից բարձր, մարզերում՝ ՏՏ-ների 27.4 տոկոսի մոտ:


Ընդ որում, բնակարանում տաք է եղել (19 աստիճան և ավելի) հիմնականում բնական գազով շեռուցող ՏՏ-ների 50.3: Վառելափայտով շեռուցող ՏՏ-ների բնակարանում շատ տաք չի եղել:

Հարկ է նշել, որ բնակարանում 22 աստիճան և ավելի ապահովված ՏՏ-ները գեակչում են այլ սարքով շեռուցած ՏՏ-ների խմբում, քանի որ այստեղ ներառվում են կենտրոնացված

## Բաժին 5. Ձեռուցման և տաք ջրամատակարարման ծախսերը

2010-2011 ձմռան ընթացքում բնակարանի ջեռուցման վրա կատարված միջին ամսական ծախսը կազմել է 27,600 դրամ՝ 39.5 տոկոսով աճելով նախորդ տարվա համեմատ: Ծախսերն աճել են թե՛ Երևանում և թե՛ մարզերում (Գծապատկեր 23):

**Գծապատկեր 23. Ձեռուցման և տաք ջրամատակարարման միջին ամսական ծախսերն ըստ բնակավայրի և ջեռուցման համար կիրառվող էներգիայի տեսակների, ՀՀ դրամ**




Աղբյուրը՝ ՁԻԳՀ(2011)

14,625 դրամի դիմաց:

2010-2011 ձմռանը SS-ների 70.7 տոկոսը ջեռուցման վրա ծախսել է ավելի քան 20,000 դրամ, մինչդեռ նախորդ ձմռանն այս չափով ջեռուցման վրա ծախսել են SS-ների 37.5 տոկոսը: Կենտրոնացված ջեռուցման դեպքում ամսական միջին ծախսը ջեռուցման վրա 15,000 դրամից պակաս չի եղել. այդ SS-ների 10 տոկոսը միջինում վճարել է 15,000-20,000 դրամ, իսկ մնացած 90 տոկոսը՝ 20,000 դրամից ավելի:

**Գծապատկեր 24. Ձեռուցման և տաք ջրամատակարարման միջին ամսական ծախսերն ըստ էներգիայի տարբեր աղբյուրների, տոկոս**




Աղբյուրը՝ ՁԻԳՀ(2011)

Էլեկտրաէներգիայով ջեռուցելու դեպքում SS-ների 60.7 տոկոսը ամսական վճարել է 20,000 դրամից ավելի, իսկ 26.1 տոկոսը՝ մինչև 10,000 դրամ: Ձեռուցման այս աղբյուրի դեպքում ծախսը նախորդ տարվա համեմատ աճել է, և քանի որ 2010 թվականի ընթացքում Էլեկտրաէներգիայի սակագնի փոփոխությունն տեղի չի ունեցել, այս երևույթը բացատրվում է

այլ հանգամանքով: Մասնավորապես, փոփոխվել է էլեկտրաէներգիայով ջեռուցող SS-ների բաշխումն ըստ քվանտիլային խմբերի (Գծապատկեր 25):


**Գծապատկեր 25. Էլեկտրաէներգիայով ջեռուցող SS-ներն ըստ քվանտիլային խմբերի 2010-211 և Նախորդ ձմռանը, տոկոս**



Աղբյուրը՝ ՁԻԳՀ(2011) և ՁԻԳՀ(2010)

ջեռուցման վրա կատարված ծախսերի շարունակական վերլուծությունը, քվանտիլային ավելի բարձր խմբերում ջեռուցման վրա ավելի շատ են ծախսել:

**Գծապատկեր 26. Ջեռուցման և տաք ջրամատակարարման միջին ամսական ծախսերն ըստ քվանտիլային խմբերի**



Աղբյուրը՝ ՁԻԳՀ(2011)


ապահոված SS-ները ջեռուցման համար վճարել են տարբեր գումարներ: Մասնավորապես, այն SS-ները, ում բնակարանում ձմռան ամիսներին շատ տաք է եղել (22 աստիճան և ավելի), ամսական վճարել են միջինում 39,520 դրամ, մինչդեռ ցուրտ բնակարանների դեպքում (8-14 աստիճան)՝ 18,349 դրամ:

Նախորդ ձմռանը էլեկտրաէներգիայով ջեռուցող SS-ների 50.7 տոկոսը եկամտային (սպառման) ամենացածր երկու խմբերում են եղել, և 16.8 տոկոսն է պատկանել քվանտիլ 4-ին և քվանտիլ 5-ին: Այս տարի պատկերը փոխվել է: Ամենահարուստ երկու քվանտիլում են եղել էլեկտրաէներգիայով ջեռուցողների 38.5 տոկոսը, իսկ եկամտային ամենացածր երկու խմբում՝ SS-ների 40.1 տոկոսը: Ինչպես ցույց է տվել

Ջեռուցման ծախսերն աճել են բոլոր քվանտիլային խմբերում Նախորդ ձմռան համեմատ: Քվանտիլ 5-ին պատկանող SS-ները միջինում վճարել են ամսական 36,387 դրամ, մինչդեռ քվանտիլային ամենացածր խմբում՝ 16,178 դրամ: Յուրաքանչյուր քվանտիլային խմբում ամսական ծախսերը ջեռուցման վրա աճել են միջինում 5-6 հազար դրամով:

Բնակարանում ձմռան ամիսներին տարբեր ջերմաստիճան

**Գծապատկեր 27. Ձեռուցման և տաք ջրամատակարարման միջին ամսական ծախսերն ըստ բնակարանների ջեռուցման ամբողջականության և ջերմաստիճանի գնահատականների, ՀՀ դրամ**




Աղբյուրը՝ ՁԻԳՀ(2011)

Բնակարանն ամբողջությամբ ջեռուցած SS-ների կողմից ջեռուցման վրա կատարած ծախսերը կազմել են միջինում 34,772 դրամ: Այն դեպքերում, երբ խոհանոցը և բաղնիքը ջեռուցվել են, SS-ները միջինում վճարել են համապատասխանաբար 29,383 և 31,875 դրամ, իսկ բնակարանի այդ հատվածները չջեռուցելու դեպքում՝ համապատասխանաբար 23,891 և 24,014 դրամ:

Ձեռուցման տարբեր աղբյուրներով բնակարանում ջերմության միևնույն մակարդակն ապահովող SS-ների կատարած ծախսերը միմյանցից տարբերվել են: Մասնավորապես, Էլեկտրաէներգիայով ջեռուցող SS-ները, ում բնակարանում ձմռան ամիսներին շատ տաք է եղել, ամսական վճարել են միջինում 31,543 դրամ: Նույն ջերմությունը բնական գազով ապահովելու դեպքում SS-ները վճարել են 40,101 դրամ:

**Գծապատկեր 28. Ձեռուցման և տաք ջրամատակարարման միջին ամսական ծախսերն ըստ ջեռուցման համար կիրառվող էներգիայի տեսակի և բնակարանում միջին ջերմաստիճանի գնահատականների, ՀՀ դրամ**



Աղբյուրը՝ ՁԻԳՀ(2011)


Այս պահանջները բնակարանում ապահովելու բավարար ջերմությունն համեմատաբար ցածր ծախսերով:

Այն բնակարաններում, որտեղ 15 աստիճանից բարձր ջերմություն չի ապահովվել, բնական գազով և Էլեկտրաէներգիայով ջեռուցելու դեպքում SS-ները ծախսել են միջինում համապատասխանաբար 21,573 և 19,261 դրամ: Բնակարանում 15-19 աստիճան ապահովելու համար վառելիքայտով ջեռուցող SS-ները վճարել են միջինում 30,448 դրամ:

Նշենք, որ, ինչպես ներկայացվեց վերևում, Էլեկտրաէներգիայով ջեռուցող SS-ների շուրջ 40 տոկոսը պատկանում է Քվանտիլ 4-ին և Քվանտիլ 5-ին: Այս խմբերին պատկանող SS-ները բարեկեցիկ են, նրանց մեծամասնության մոտ բնակարանի պատուհանները գտնվում են լավ վիճակում (եվրո պատուհաններ), բացի այդ, այս SS-ները կարող են իրենց թույլ տալ իրականացնել են էներգախնայողության այլ միջոցառումներ, օրինակ, արտաքին պատերի ջերմամեկուսացում: Այս ամենը հնարավորություն է տալիս պահ-

Գծապատկեր 29-ում ներկայացվում է ՏՏ-ների կատարած ծախսն ըստ ջեռուցման սարքի: Շատ տաք բնակարաններում ջեռուցման համար ամենաբարձր գումարը վճարել են ջեռուցման անհատական կաթսայով ջեռուցողները՝ 41,788 դրամ, այնուհետ՝ ոչ գործարանային արտադրության էլեկտրական սարքով և կենտրոնացված ջեռուցում և լուկալ-կոլեկտիվ կաթսա ունեցողները՝ 41,400-ական դրամ: Փայտի վառարանով ջեռուցման դեպքում շատ տաք չի եղել և ոչ մի բնակարանում:


**Գծապատկեր 29. Ջեռուցման և տաք ջրամատակարարման միջին ամսական ծախսերն ըստ ջեռուցման համար կիրառվող սարքի և բնակարանում միջին ջերմաստիճանի գնահատականների, 1000 ՀՀ դրամ**



Աղբյուրը՝ ՁԻԳՀ(2011)

### Բաժին 6. Ջեռուցման պայմանների պատճառով հիվանդացություններ

**Գծապատկեր 30. Անբավարար ջեռուցումից և ջեռուցման աղտոտվածությունից հիվանդացությունը Երևանում և մարզերում, տոկոս**



Աղբյուրը՝ ՁԻԳՀ(2011)


Ներքին կազմել են 45 տոկոս նախորդ ծմռան 39.8 տոկոսի դիմաց:

ՏՏ-ների 44.5 տոկոսում եղել են հիվանդացության դեպքեր՝ կապված անբավարար ջեռուցման հետ, իսկ 4.9 տոկոսում՝ կապված ջեռուցման աղտոտվածության հետ: Ընդ որում, հիվանդության դեպքերը մարզերում շատ ավելի հաճախ են եղել, քան Երևանում:

Նախորդ տարվա համեմատ, ջեռուցման պայմաններից (անբավարար ջեռուցումից և աղտոտվածությունից) ՏՏ-ում հիվանդացության մակարդակն աճել է: Այս ծմռանը այդպիսի ՏՏ-




**Գծապատկեր 31. Ջեռուցման պայմանների պատճառով հիվանդության դեպքերի առկայությունը SS-ներում այս և նախորդ ձմռանը, տոկոս**



Աղբյուրը՝ ՁԻԳՀ(2011) և ՁԻԳՀ(2010)

**Գծապատկեր 32. Ջեռուցման պայմանների պատճառով հիվանդացությունն ըստ մարզերի, տոկոս**




Աղբյուրը՝ ՁԻԳՀ(2011)

Երևանում հիվանդացության մակարդակն աճել է 1.3 տոկոսային կետով, մինչդեռ մարզերում՝ 9.9 տոկոսային կետով:

Գծապատկեր 32-ում ներկայացվում է ջեռուցման պայմաններից հիվանդացության մակարդակն ըստ մարզերի: Այսպես, հիվանդության դեպքերը տոկոսային արտահայտությամբ գերակշռել են Արագածոտնի և Շիրակի մարզերում՝ SS-ների համապատասխանաբար 82.5 և 76.7 տոկոսում: Տավուշի մարզում հիվանդացության առնվազն մեկ դեպք եղել է SS-ների 38.3 տոկոսում:

Բնակարանն ամբողջությամբ ջեռուցող SS-ների 39.5 տոկոսում է եղել ջեռուցման պայմաններից հիվանդության առնվազն մեկ դեպք, մինչդեռ չջեռուցվող բնակարաններում բնակվող SS-ների դեպքում՝ 62.7 տոկոսի մոտ:

**Գծապատկեր 33. Ջեռուցման պայմանների պատճառով հիվանդության դեպքերի առկայությունը SS-ներում ըստ ջեռուցման համար կիրառվող էներգիայի տեսակի և ջեռուցման ամբողջականության, տոկոս**




Աղբյուրը՝ ՁԻԳՀ(2011)

Հիվանդության դեպքերն առավել հաճախ հանդիպել են վառելափայտով ջեռուցող SS-ների և առավել հազվադեպ բնական գազով ջեռուցող SS-ների մոտ՝ համապատասխանաբար 66.9 և 42.6 տոկոսով:

Քանի որ երեխաները և տարեցներն առավել զգայուն են ջեռուցման պայմանների նկատմամբ, հետևաբար, այն SS-ներում, որտեղ նրանք առկա են եղել, հիվանդացության մակարդակն ավելի բարձր է եղել (Գծապատկեր 34):

**Գծապատկեր 34. Ջեռուցման պայմանների պատճառով հիվանդության դեպքերի առկայությունը SS-ներում ըստ երեխաների և տարեցների առկայության, տոկոս**




Աղբյուրը՝ ՋԻԳՀ(2011)

Երեխաներ ունեցող SS-ների 46.5 տոկոսի մոտ ձմռան ամիսներին ջեռուցման պայմանների պատճառով առկա լինելու մեկ հիվանդության դեպք է եղել, իսկ երեխաների բացակայության դեպքում՝ SS-ների 42.1 տոկոսի մոտ: Տարեց անդամների առկայության դեպքում SS-ների 46.8 տոկոսում են եղել հիվանդներ:

Ջեռուցման պայմաններից հիվանդներ եղել են բնակարանում 20 աստիճան և ավելի ջերմաստիճան ապահովված SS-ների 23.8 տոկոսում (նախորդ տարի՝ 23.9 տոկոսում), և ցուրտ (մինչև 15 աստիճան) բնակարաններում բնակվողների 65.3 տոկոսում:

**Գծապատկեր 35. Ջեռուցման պայմանների պատճառով հիվանդության դեպքերի առկայությունը SS-ներում ըստ բնակարանի ջերմաստիճանի գնահատականների, տոկոս**




Աղբյուրը՝ ՋԻԳՀ(2011)

Հիվանդության դեպքերն ըստ բնակարանի միջին ջերմաստիճանի նվազման աճել են: Նույն միտումն է դրսևորվում ըստ քվանտիլային խմբերի (բացառությամբ քվանտիլ 5-ի): Քվանտիլ

1-ին պատկանող SS-ների 58.8 տոկոսի մոտ եղել են հիվանդներ, մինչդեռ Զվանտիլ 5-ի SS-ներում՝ 37.1 տոկոսի մոտ (Գծապատկեր 36):


**Գծապատկեր 36. Ջեռուցման պայմանների պատճառով հիվանդության դեպքերի առկայությունն ըստ Զվանտիլային խմբերի, տոկոս**



Աղբյուրը՝ ՋԻԳՀ(2011)

Իրենց ապահովված համարող SS-ների շրջանում բնակարանը բնական գազով ջեռուցողների մոտ հիվանդացության մակարդակն ավելի ցածր է, քան ջեռուցման այլ աղբյուրներ կիրառողների դեպքում՝ այդ SS-ների համապատասխանաբար 31.8 և 33.3 տոկոսում:

**Գծապատկեր 37. Ջեռուցման պայմանների պատճառով հիվանդության դեպքերի առկայությունը բնական գազով և էներգիայի այլ աղբյուր կիրառող SS-ներում ըստ աղբատության սուբյեկտիվ գնահատականների, տոկոս**




Աղբյուրը՝ ՋԻԳՀ(2011)

Իրենց սուբյեկտիվ կարծիքով ծայրահեղ աղբատ բնակչության շրջանում հիվանդացության մակարդակը բնական գազով ջեռուցողների մոտ 84 տոկոս է, իսկ այլ աղբյուրով ջեռուցողների մոտ՝ 70 տոկոս: Այս երևույթը կարելի է բացատրել նրանով, որ նշված SS-ները գազի համեմատաբար թանկ լինելու պատճառով չեն կարողանում բավարար չափով ջեռուցել բնակարանը և ապահովել անհրաժեշտ միջին ջերմաստիճան:


## Բաժին 7. Անցումն անվտանգ և մաքուր ջեռուցման

**Գծապատկեր 38. Գործարանային և ոչ գործարանային սարքերի կիրառումը բնական գազով և էլեկտրաէներգիայով ջեռուցող ՏՏ-ների մոտ 2009-2010 և 2010-2011 ձմռանը, տոկոս**




Աղբյուրը՝ ԶԻԳՀ(2010) և ԶԻԳՀ(2011)

**Գծապատկեր 39. Բնական գազով ջեռուցողների կողմից ջեռուցման սարքերի կիրառումը, տոկոս բնական գազով ջեռուցող ընդամենը ՏՏ-ների մեջ**



Աղբյուրը՝ ԶԻԳՀ(2010) և ԶԻԳՀ(2011)

**Գծապատկեր 40. Էլեկտրաէներգիայով ջեռուցող ՏՏ-ների կողմից ջեռուցման սարքերի կիրառումը, տոկոս էլեկտրաէներգիայով ջեռուցող ընդամենը ՏՏ-ների մեջ**



Աղբյուրը՝ ԶԻԳՀ(2011)

Բնակարանը բնական գազով և էլեկտրաէներգիայով ջեռուցող ՏՏ-ների մոտ պահպանվում է ոչ գործարանային և ինքնաշեն սարքավորումներից դեպի ավելի անվտանգ և արդյունավետ գործարանային սարքավորումներն անցման միտումը: Նախորդ տարվա համեմատ 2.3 և 5.2 տոկոսային կետով աճել են համապատասխանաբար բնական գազի և էլեկտրաէներգիայի գործարանային սարքերի կիրառելիությունը: Չուգահեռաբար, կրճատվել է ոչ գործարանային սարքերի օգտագործումը:


Բնական գազով ջեռուցող ՏՏ-ների մոտ նախորդ տարվա համեմատ նվազել է գազօջախով ջեռուցումների մակարդակը՝ կազմելով 3.1 տոկոս նախորդ տարվա 5.5 տոկոսի դիմաց, փոխարենը աճել է գազի վառարանների և ջեռուցման անհատական կաթսաների օգտագործումը՝ համապատասխանաբար 0.2 և 1.8 տոկոսային կետերով:

Էլեկտրաէներգիայով ջեռուցողների մոտ գործարանային արտադրության սարքերի օգտագործումն այս ձմռանն աճել է նախորդ ձմռան համեմատ՝ կազմելով 51 տոկոս՝ արդյունքում գերազանցելով ոչ գործարանային սարքերի օգտագործումը, որը կազմել է 46.2 տոկոս:

## Բաժին 8. Բավարարվածություն և նախապատվություններ

Բնակարանում ջեռուցման պայմաններից բավարարվածությունն այս ձմռանը նախորդ տարվա համեմատ ցածր է եղել: Ձեռուցումից լիովին բավարարված են եղել SS-ների 28.6 տոկոսը, որը 2.1 տոկոսային կետով պակաս է եղել նախորդ ձմռան ցուցանիշից: Շարունակաբար կրճատվել է նաև ջեռուցումից մասամբ բավարարված SS-ների կշիռը՝ այս ձմռանը կազմելով 21.1 տոկոս, մինչդեռ 2009-2010 ձմռանը այդ SS-ները կազմել են 42.6 տոկոս (Գծապատկեր 41):

**Գծապատկեր 41. 2010-2011 և նախորդ երկու ձմռաների ընթացքում ջեռուցման պայմաններից բավարարվածության գնահատականները, տոկոս**




Աղբյուրը՝ ՁԻԳՀ(2011), ՁԻԳՀ(2010) և ՁԻԳՀ(2009)

Ձեռուցումից բավարարվածությունը, ինչպես և նախորդ տարիներին, հատկապես ցածր է մարզերում: Լիովին բավարարված SS-ները կազմել են ընդամենը 13.9 տոկոս, մինչդեռ SS-ների 53.3 տոկոսն ընդհանրապես բավարարված չեն եղել իրենց բնակարանների ջեռուցման պայմաններից: Երևանում ջեռուցումից գոհ SS-ների կշիռը բարձր է ինչպես մարզային, այնպես էլ հանրապետական միջինից: Ձեռուցման պայմաններից լիովին բավարարված SS-

ները կազմել են 40.6 տոկոս՝ նախորդ ձմռան համեմատ նվազելով 2.7 տոկոսային կետով:

**Գծապատկեր 42. Ձեռուցման պայմաններից բավարարվածության գնահատականներն ըստ ջեռուցման համար կիրառվող սարքերի, տոկոս**




Աղբյուրը՝ ՁԻԳՀ(2011)

գազի վառարանով ջեռուցող SS-ների 71.2 տոկոսը բավարարված չեն եղել ջեռուցման պայմաններից:

Բնակարանի ջեռուցումից բավարարվածությունը զգալիորեն տարբերվել է ըստ ջեռուցման կիրառվող սարքի: Այսպես, կենտրոնացված ջեռուցման և անհատական ջեռուցման կաթսաների դեպքում լիովին բավարարված են եղել SS-ների համապատասխանաբար 61.5 և 77.8 տոկոսը, մինչդեռ փայտի վառարանով ջեռուցման դեպքում՝ SS-ների 3.4 և գազօջախով ջեռուցողների 3.2 տոկոսը: Ինքնաշեն

Ինչպես և Նախորդ տարի, գործարանային արտադրության էլեկտրական սարքերից բավարարվածությունը փոքր չափով է տարբերվել ոչ գործարանային արտադրության էլեկտրական սարքերից բավարարվածությունից. ջեռուցումից լիովին գոհ են եղել նշված սարքերով ջեռուցողների համապատասխանաբար 8 և 3.5 տոկոսը, և բավարարված չեն եղել 52.2 և 58.7 տոկոսը:

**Գծապատկեր 43. Ջեռուցման կիրառվող տարբերակների թերությունների գնահատականները, բազմակի պատասխան, տոկոս**




Աղբյուրը՝ ՁԻԳՀ(2011) և ՁԻԳՀ(2010)

Նախորդ ձմռան համեմատ SS-ների բաշխումն ըստ իրենց կողմից կիրառված ջեռուցման սարքերի թերությունների գրեթե չի փոփոխվել: Մասնավորապես, SS-ների 33.6 տոկոսը նշել է, ներկայում կիրառվող ջեռուցման սարքը թերություն չունի (Նախորդ ձմռանը՝ 34.1 տոկոսը): SS-ների 28.1 տոկոսը, ինչպես և Նախորդ տարի, որպես թերություն նշել է ջեռուցման տարբերակի օգտագործման թանկությունը: SS-ների 26.8 տոկոսի կարծիքով, ջերմությունն անհավասար է բաշխվում:

Գծապատկեր 44-ում ներկայացվում է ջեռուցման այլ սարքին տրվող Նախապատվությունը այս և Նախորդ ձմռանը: SS-ների 17.7 տոկոսը Նախընտրել է շարունակել ջեռուցել բնակարանը ներկայում կիրառվող սարքով: Ինչպես և Նախորդ ձմռանը, այս տարի ևս SS-ների համար հիմնական Նախընտրելի ջեռուցման տարբերակը անհատական ջեռուցման կաթսան է՝ SS-ների 52.2 տոկոսը: Ընդ որում, այս տարբերակը Նախընտրելի է երևանաբնակ SS-ների 55 և մարզաբնակ SS-ների 49.9 տոկոսի համար:

**Գծապատկեր 44. Ջեռուցման տարբերակների Նախապատվությունները 2010-2011 և Նախորդ ձմռանն ըստ բնակավայրերի, տոկոս տվյալ տարածքի ընդամենի նկատմամբ**




Աղբյուրը՝ ՁԻԳՀ(2011) և ՁԻԳՀ(2010)

Այս տարի ավելացել է Նաև այն SS-ների թիվը, ովքեր կնախընտրեին ունենալ կենտրոնացված ջեռուցում և լոկալ-կոլեկտիվ կաթսա՝ SS-ների համապատասխանաբար 11.3 և 10.3 տոկոսը: Գազի վառարան ցանկացող SS-ների կշիռը Նույնն է, ինչ Նախորդ ձմռանը՝ 4.9 տոկոս: Ընդհանուր առմամբ, միտումը ցույց է տալիս, որ բնակչությունը տարեցտարի ձգտում է ավելի առաջադեմ՝ անվտանգ և մաքուր, ջեռուցման տարբերակների:

Ստորև ներկայացվում են այս կամ այն տարբերակին նախապատվություն տալու հիմնական պատճառները: Հիմնական հատկությունները, որոնցով, ըստ SS-ների, օժտված են իրենց կողմից նախընտրելի ջեռուցման սարքերը, հանդիսանում են անվտանգությունը (40.6 տոկոս) և բավարար ջերմությամբ ապահովելու ունակությունը (36.9 տոկոս):

**Գծապատկեր 45. Ջեռուցման այլ տարբերակների նախապատվություն տալու պատճառները Հայաստանում և մարզերում, տոկոս տվյալ տարածքի ընդամենի նկատմամբ**




Աղբյուրը՝ ՁԻԳՀ(2011)

SS-ների 13 տոկոսի կարծիքով իրենց նախընտրած սարքը մաքուր է, իսկ 7.3 տոկոսի կողմից՝ մատչելի:

Երևանում սարքի անվտանգությանն ավելի մեծ կարևորություն է տրվել, քան մարզերում, իսկ բավարար ջերմության տեսանկյունից պատկերը հակառակն է. այդ հատկանիշը մարզերում ավելի շատ է կարևորվել:

**Գծապատկեր 46. Ջեռուցման նախընտրվող սարքից չօգտվելու պատճառները Հայաստանում և մարզերում, տոկոսը տվյալ տարածքի ընդամենի նկատմամբ**



Աղբյուրը՝ ՁԻԳՀ(2011)


Հիմնական պատճառը, որը խոչընդոտ է հանդիսանում SS-ների կողմից իրենց համար նախընտրելի սարքը ձեռք բերելու տեսանկյունից, հանդիսանում է ֆինանսական միջոցների սղությունը՝ որևէ սարքի նախապատվություն տվող SS-ների 77.7 տոկոսը: Այդ խնդիրն առավել սրված է մարզերում՝ SS-ների 81.3 տոկոսի դեպքում:

Բացի ֆինանսական խնդիրները, նշվել են նաև տեխնիկական խնդիրներ (8.5 տոկոս) և մատակարարների բացակայություն (7.1 տոկոս), իսկ 6.7 տոկոսը հիմնավորել է այլ պատճառներով:

## Բաժին 9. Ջեռուցման բարելավման հնարավորությունները և սոցիալական համագործակցությունը

Հայաստանում ՏՏ-ների շուրջ 57 տոկոսն է տեղյակ եղել, որ կարելի է ջեռուցման պայմանների բարելավման նպատակով վարկ վերցնել: Սակայն վարկ վերցնելու ցանկություն է հայտնել ՏՏ-ների ընդամենը 7.9 տոկոսը (Գծապատկեր 47):


**Գծապատկեր 47. Ջեռուցման պայմանների բարելավման համար վարկերի մասին տեղեկացվածությունը և վարկ վերցնելու պատրաստակամությունն ըստ մարզերի, տոկոս**



Աղբյուրը՝ ԶԻԳՀ(2011)

Վարկերի մասին տեղեկացվածությունը հատկապես բարձր է եղել Երևանում՝ 72.7 տոկոս, և բավականին ցածր՝ Տավուշի և Վայոց ձորի մարզերում՝ համապատասխանաբար 9.8 և 13.6 տոկոս: Ի հեճուկս բարձր իրազեկվածությանը, վարկ վերցնելու ցանկությունը և պատրաստակամությունն ամենացածրն է եղել հենց Երևանում՝ 3.3 տոկոս, իսկ ամենաբարձրը՝ Գեղարքունիքի մարզում՝ 27.6 տոկոս:

**Գծապատկեր 48. Վարկ չցանկանալու հիմնական պատճառները, տոկոս**



Աղբյուրը՝ ԶԻԳՀ(2011)

Հիմնական պատճառները, ըստ որոնց ՏՏ-ները չեն ցանկացել վարկ վերցնել, հանդիսացել է վարկը մարելու կարողության և վարկի անհրաժեշտության բացակայությունը:


Վարկ չցանկացող ՏՏ-ների 41 տոկոսը նշել է, որ իրենց վարկ հարկավոր չէ, 48 տոկոսն ի վիճակի չէ մարել վարկը: Եվս 4 տոկոսը նշել է, որ կարող է սեփական միջոցներից ներդնել: Պատկերը նախորդ տարվա

համեմատ գրեթե չի փոփոխվել:

Ստորև՝ Գծապատկեր 49-ում, ներկայացվում են վարկերի մասին ՏՏ-ների տեղեկացվածությունը և վարկ վերցնելու ցանկությունն ըստ նախընտրելի սարքերի: Այսպես, վարկերի մասին տեղեկացած են լոկալ-կոլեկտիվ կաթսա նախընտրող ՏՏ-ների 67 տոկոսը, իսկ վարկ վերցնելու ցանկություն են հայտնել նրանց 19.2 տոկոսը: Բնակարանն անհատական ջեռուցման կաթսայով ջեռուցել ցանկացող ՏՏ-ների 53.9 տոկոսն էր տեղյակ, որ կարող է վարկ վերցնել և ձեռք բերել իր նախընտրած ջեռուցման սարքը, սակայն նրանց 11.4 տոկոսն է վարկի ստացման ցանկություն հայտնել:



**Գծապատկեր 49. Ձեռուցման պայմանների բարելավման համար վարկի մասին տեղեկացվածությունը, վարկ վերցնելու պատրաստ SS-ներն ըստ ջեռուցման նախընտրվող սարքի, տոկոս**




Աղբյուրը՝ ՁԻԳՀ(2011)

Վարկերի մասին տեղեկացվածությունը հատկապես ցածր էր այն SS-ների մոտ, ում համար գազի վառարանը հանդիսացել է նախընտրելի ջեռուցման սարք՝ 29.5 տոկոս, և ցածր է նաև վարկ վերցնելու ցանկությունը՝ 4.1 տոկոս: Վարկերի մասին տեղեկացվածության և դրանք

վերցնելու ցանկության պատկերը նախորդ տարվա համեմատ գրեթե չի փոփոխվել:

**Գծապատկեր 50. Ձեռուցման պայմանների բարելավման համար վարկի մասին տեղեկացվածությունը, վարկ վերցնելու պատրաստ SS-ներն ըստ քվանտիլային խմբերի և ջեռուցման փաստացի ծախսերի, տոկոս**




Աղբյուրը՝ ՁԻԳՀ(2011)

5,000-10,000 դրամ ծախսած SS-ների մոտ՝ 34.1 տոկոս: Համանման կերպով, քվանտիլային (ծախսային) ամենաբարձր երկու խմբերում տեղեկացվածությունը համեմատաբար բարձր է, սակայն վարկ վերցնելու ցանկությունն հայտնած SS-ների կշիռն ամենամեծն է միջին ծախսային խմբում (Քվանտիլ 3):

Գծապատկեր 51-ում ներկայացվում են SS-ների կողմից ջեռուցման վրա կատարված ամսական ծախսերը և ջեռուցման բարելավման նպատակով տրամադրվող վարկերի համար վճարումների մեծությունը:

Այսպես, երեք տարով տրամադրվող վարկերի դեպքում SS-ները պատրաստ են միջինում վճարել 8,323 դրամ, իսկ երկարաժամկետ՝ 7 տարով տրամադրվող վարկերի դեպքում՝ 4,972 դրամ: Երևանում SS-ները պատրաստ են միջինում վճարել ավելի շատ, քան մարզերում:


**Գծապատկեր 51. Ջեռուցման պայմանների բարելավման համար վարկի ամսական մարումը և ջեռուցման ծախսերը, ՀՀ դրամ**



**Աղբյուրը՝ ՁԻԳՀ(2011)**

Նախորդ տարվա համեմատ, ՏՏ-ները պատրաստ են վճարել ավելի փոքր գումար: Մասնավորապես, 3 տարով վարկ վերցնելու դեպքում ՏՏ-ները պատրաստ են վճարել 8,323 դրամ, իսկ նախորդ ձմռանը՝ 8,626 դրամ: Ի տարբերություն միջնաժամկետ վարկերի, 7 տարով տրամադրվող վարկերի դեպքում ամսական գումարը, որը ՏՏ-ները պատրաստ են վճարել, փոքր ինչ աճել է՝ կազմելով 4,972 դրամ նախորդ տարվա 4,965 դրամի դիմաց:


**Գծապատկեր 52. Ջեռուցման պայմանների բարելավման համար վարկի ամսական մարումը 2010-2011 և նախորդ ձմռանը, ՀՀ դրամ**



**Աղբյուրը՝ ՁԻԳՀ(2011) և ՁԻԳՀ(2010)**

Բնակարաններում ջեռուցման պայմանները կախված են ոչ միայն ջեռուցման տարբերակից, այլ նաև պատուհանների վիճակից, քանի որ դրանց վատ վիճակում գտնվելու դեպքում ջերմությունը բնակարանում երկար չի պահպանվի՝ դարձնելով ջեռուցումը պակաս արդյունավետ: Ստորև ներկայացվում են պատուհանների վիճակի գնահատականներն ըստ ջեռուցման կիրառվող սարքի: Ընդհանուր առմամբ, ՏՏ-ների 51.2 տոկոսն իրենց բնակարանի պատուհանները գնահատել են միջին, 29.5 տոկոսը՝ լավ, իսկ 19.2 տոկոսի կարծիքով պատուհանները գտնվում են վատ վիճակում:

**Գծապատկեր 53. Պատուհանների ընդհանուր վիճակի գնահատականն ըստ ջեռուցման համար կիրառվող սարքի, տոկոս**




Աղբյուրը՝ ԶԻԳՀ(2011)

Նկատենք, որ պատուհանները գտնվում են լավ վիճակում անհատական ջեռուցման կաթսաներով ջեռուցողների 61 տոկոսի մոտ, որը կարելի է մեկնաբանել նրանով, որ ջեռուցման այս տարբերակը հիմնականում կիրառվում է միջին և բարձր եկամտային խմբի՝ բարեկեցիկ ՏՏ-ների մոտ: Պատուհանների վիճակն առավել անմխիթար է փայտի վառարանով ջեռուցողների մոտ. 49.2 տոկոսի դեպքում պատուհանները եղել են վատ վիճակում՝ մասամբ կոտորտված պատուհաններով, և 44.8 տոկոսի դեպքում՝ միջին վիճակում: Ընդամենը 6.1 տոկոսն է բնակարանի պատուհանների վիճակը գնահատել դրական:

Գծապատկեր 54-ում ներկայացվում է բնակարանի պատուհանների վիճակը տարբեր քվանտիլային խմբերում:

**Գծապատկեր 54. Բնակարանների պատուհանների վիճակը տարբեր քվանտիլային խմբերում, տոկոս տվյալ խմբի ՏՏ-ների մեջ**




Աղբյուրը՝ ԶԻԳՀ(2011)

ՏՏ-ների 67.4 տոկոսն այն կարծիքին է, որ բնակարանի պատուհանները փոխելու դեպքում ջեռուցումն ավելի արդյունավետ կլինի, և կինսայվեն ջեռուցման սարքերը: Այդպես են կարծում էլեկտրաէներգիայով ջեռուցող ՏՏ-ների 71.3 և վառելափայտով ջեռուցողների 76.9 տոկոսը: Բնական գազի դեպքում նման մոտեցումով ՏՏ-ների կշիռն ավելի փոքր է՝ 65.1 տոկոս: Պատուհանները նորով փոխարինելուց դրական ակնկալիքներ ունեցող ՏՏ-ներն առավել մեծ կշիռ են ունեցել ջեռուցման վրա ամսական 10,000-20,000 դրամ ծախսող ՏՏ-

Այսպես, եկամտային երկու ամենաբարձր խմբերում՝ Զվանտիլ 5-ում և Զվանտիլ 4-ում, ՏՏ-ների համապատասխանաբար 51.6 և 35.3 տոկոսի բնակարաններում պատուհանները գտնվել են լավ վիճակում (Եվրո պատուհաններ): Մինչդեռ, Զվանտիլ 1-ին պատկանող ՏՏ-ների 40.1 տոկոսի մոտ պատուհանները գտնվել են վատ վիճակում՝ մասամբ կոտորտված ապակիներով:


**Գծապատկեր 55. SS-ները, որոնք պատուհանները փոխելու դեպքում կինսայեն ջեռուցման սարքերը և ջերմությունը՝ ըստ կիրառվող էներգիայի աղբյուրի և ջեռուցման վրա կատարված ծախսի, տոկոս**



Աղբյուրը՝ ԶԻԳՀ(2011)

Երևանում տեղեկացվածության մակարդակն ավելի բարձր է եղել, քան մարզերում: Բացի այդ, Երևանում բնակվող SS-ների 80.9 տոկոսը նշել է համատիրության առկայության մասին, մինչդեռ մարզերում՝ SS-ների 43.3 տոկոսը:


**Գծապատկեր 56. Համատիրությունների առկայությունը Հայաստանում և մարզերում ըստ SS-ների կարծիքի, տոկոս**



Աղբյուրը՝ ԶԻԳՀ(2011)

Համատիրությունը թե՛ կայացած և թե՛ չկայացած համարող SS-ների տոկոսը:

**Գծապատկեր 57. Համատիրությունների կայացվածության և ծառայություններ մատուցելու մասին SS-ների գնահատականները, տոկոս**



Աղբյուրը՝ ԶԻԳՀ(2011) և ԶԻԳՀ(2010)

ների խմբում՝ միջինում 76 տոկոս: 20,000 դրամ և ավելի ծախսող SS-ներն ավելի քիչ են հակված այդ կարծիքին՝ SS-ների 64.3 տոկոսը:

Գծապատկեր 56-ում ներկայացվում է SS-ների տեղեկացվածությունն իրենց համայնքում գործող Համատիրության վերաբերյալ: SS-ների 64 տոկոսը նշել է, որ իրենք ունեն Համատիրություն, 20.6 տոկոսը նշել են, որ Համատիրությունը բացակայում է, իսկ 15.5 տոկոսն ընդհանրապես տեղյակ չի եղել:

Համատիրությունների առկայությունը դեռևս չի խոսում նրանց ունեցած դերի և կարևորության մասին: Ներքոբերյալ գծապատկերը վկայում է այդ մասին: Եթե SS-ների 64 տոկոսը նշել է, որ իրենք ունեն Համատիրություն, ապա ընդամենը 32.7 տոկոսն է նշել, որ Համատիրությունը կայացած է, իսկ 39.2 տոկոսը նշել է, այն կայացած չէ: Նախորդ տարվա համեմատ կրճատվել է

SS-ների 25.7 տոկոսի կարծիքով Համատիրությունը ոչ մի ծառայություն չի մատուցել: Այս ցուցանիշը զգալիորեն բարելավվել է նախորդ տարվա համեմատ՝ 57.7 տոկոս: SS-ների կեսը նշել են, որ ինչ-որ ծառայություն Համատիրությունն իրենց մատուցել է. այս ցուցանիշը նաև բարելավվել է նախորդ տարվա համեմատ՝ աճելով 12.3 տոկոսային կետով: Անտեղյակ է եղել SS-ների 24.2 տոկոսը:

Շենքի բնակիչների համատեղ նախաձեռնությամբ իրականացվել են մի շարք աշխատանքներ ընդհանուր բակի, մուտքի և այլ հանրային օգտագործման բարիքների պահպանման և բարեկարգման ուղղությամբ: Մասնավորապես, SS-ների 22.6 տոկոսը նշել է, որ իրենք իրականացրել են բակի նորոգում և բարեկարգում, 26.3 տոկոսի դեպքում կատարվել է մուտքի վերանորոգում: Բնակիչների կազմակերպմամբ խողովակները վերանորոգվել են SS-ների 22.2 տոկոսի մոտ: Համեմատության համար նշենք, որ բոլոր նշված աշխատանքների իրականացման մասին այս տարի նշել են ավելի մեծ թվով SS-ներ, ինչը խոսում է SS-ների կողմից սոցիալական համագործակցության պատրաստակամության աճի մասին:

**Աղյուսակ 1. Շենքի բնակիչների կողմից համատեղ կատարված աշխատանքները, տոկոս (բազմակի պատասխան)**

Ծառայություն	2010-2011	2009-2010
Բակի նորոգում, բարեկարգում	22.6	19.5
Կանաչապատում, ծառատունկ	16.4	15.0
Խաղահրապարակի կառուցում	6.7	5.8
Մուտքի վերանորոգում	26.3	21.7
Խողովակների վերանորոգում	22.2	21.8
Բակի լուսավորում	8.9	7.9

**Աղբյուրը՝ ՁԻԳՅ(2011) և ՁԻԳՅ(2010)**

Կաթսայատան՝ որպես բնակարանների ջեռուցման արդյունավետ միջոցի կառուցման հնարավորությունը դրական են գնահատել SS-ների 19.5 տոկոսը այն պայմանով, որ ինչ-որ մեկը հանձն առնի աշխատանքների կազմակերպումը: SS-ների 17.6 տոկոսի կարծիքով դա հնարավոր է ոչ կառուցման մեծ ծախսերի դեպքում, իսկ 14.3 տոկոսը այդ գաղափարը համարել է իրատեսական այն դեպքում, եթե բնակիչները համոզված լինեն ջեռուցման այդ տարբերակի ավելի մատչելի լինելու մեջ:

**Աղյուսակ 2. Շենքի բնակիչների կողմից համատեղ կաթսայատան կառուցման հավանականությունը, տոկոս (բազմակի պատասխան)**

1	Այո, եթե կազմակերպող լինի	19.5
2	Այո, եթե ամսական մեծ գումար չպահանջվի	17.6
3	Այո, եթե երկարաժամկետ վարկ տրամադրվի	1.9
4	Այո, եթե բոլորը հասկանան առավելությունները	5.5
5	Այո, եթե ջեռուցումը ավելի մատչելի լինի, քան ներկայում կիրառվում է	14.3
6	Այո, այլ	1.1
7	Ոչ, շենքի բնակիչները չեն համագործակցի	17.1
8	Ոչ, դրա անհրաժեշտությունը չկա	30.9
9	Ոչ, դա թանկ կլինի, չենք կարողանա	20.7
10	Ոչ, նման տարբերակներին չենք վստահում	4.9
11	Ոչ, տեխնիկապես լուծումները դժվար կլինեն մեր շենքի համար	4.2
12	Ոչ, շենքի բնակիչները հիմնականում աղքատ են	10.9
13	Ոչ, այլ	6.6

Աղբյուրը՝ ՁԻԳՀ(2011)

SS-ների 30.9 տոկոսի կարծիքով նման կաթսայատուն կառուցելու կարիք չկա, 20.7 տոկոսը նշել են ֆինանսական հնարավորությունների սղության մասին, իսկ 17.1 տոկոսը հռետետորեն են տրամադրված բնակիչների համագործակցության պատրաստակամությանը:

## **Հավելված 1. «Հայաստանի քաղաքային բնակավայրերի բազմաբնակարան շենքերի ջեռուցման տարբերակների ուսումնասիրություն» հետազոտության մեթոդաբանությունը**

Տեսային տնտեսությունների ջեռուցման տարբերակների ուսումնասիրություն առաջադրանքի նպատակն էր՝ ստանալ հավաստի տեղեկատվություն Հայաստանի քաղաքային բնակավայրերի բազմաբնակարան շենքերի ջեռուցման առկա պայմանների, դրանց բարելավման հնարավորությունների, ինչպես նաև, բազմաբնակարան շենքերի հանրային կառավարման մարմինների և մասնավոր ընկերությունների միջոցով մատչելի և որակյալ ջերմամատակարարման հնարավորությունների մասին:

Այս հետազոտությունը ապահովեց ընթացիկ՝ 2010-2011 թվականների ջեռուցման սեզոնի վերաբերյալ տվյալների հավաքագրում և դրանով համալրեց նախորդ տարիների հետազոտության արդյունքներով ստեղծված քանակական տվյալների դինամիկ շարքերը՝ հնարավորություն ստեղծելով իրավիճակի փոփոխության և դինամիկ զարգացումների գնահատականներ ստանալ:

Ինչպես և նախորդ հետազոտությունների ժամանակ, ստացված տեղեկության որոշակի մասն ունի որակական բնույթ, ինչպես օրինակ, բնակչության սուբյեկտիվ գնահատումներն այս կամ այն հարցերի վերաբերյալ: Սակայն, հետազոտությունը հիմնականում քանակական բնույթի է, այսինքն՝ ստացվել են կոնկրետ քանակական տվյալներ բնակչության դեմոգրաֆիական կազմի, ջեռուցման համար օգտագործվող սարքերի, կամ ջեռուցման տարբերակների, ջեռուցվող մակերեսի վերաբերյալ և այլն:

Հետազոտության գործիքներն են հետազոտության ընտրանքը և հարցաթերթը: Վերջիններս, ինչպես նաև հետազոտության ամբողջ մեթոդաբանությունը մշակվել է Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոնի կողմից:

### **Ընտրանքի ձևավորումը և հետազոտության անցկացումը**

Ընտրանքի ձևավորման համար հիմք է ծառայել պաշտոնական վիճակագրությունը: Մասնավորապես, օգտագործվել են ՀՀ ԱՎԾ «Հայաստանի Հանրապետության բնակարանային ֆոնդը և կոմունալ տնտեսությունը» վիճակագրական ժողովածուները: Հետազոտությունը հիմնվել է 2010 թվականին հրապարակած զեկույցի վրա, որտեղ ներկայացված է 2009 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ իրավիճակը, 2010 թվականին տեղի ունեցած փոփոխությունները հետազոտության նախագծման պահին հնարավոր չէր օգտագործել, քանի որ նշված զեկույցը ՀՀ ԱՎԾ կողմից հրապարակվում է յուրաքանչյուր տարի օգոստոս ամսին: Նկատենք, որ այս փաստն էական տարբերություններ չի կարող առաջացնել, քանի որ, ինչպես ցույց է տվել նախորդ փորձը, մարզային համամասնություններում էական փոփոխություններ տեղի չեն ունենում, և տեղի ունեցած փոփոխություններն էլ գրեթե չեն ազդում կամ շատ չնչին կերպով են ազդում ընտրանքի ծավալի և համամասնությունների վրա:

Այսպիսով, օգտագործելով առկա վիճակագրությունը, Հայաստանի քաղաքային համայնքներում բազմաբնակարան շենքերի բնակարանների թվաքանակը կազմել է 402.6 հազար, որի 54.9 տոկոսը երևանում է:

Հիմնվելով այս վիճակագրության վրա՝ կատարվել է գլխավոր համակցության ստրատիֆիկացիա և ԸԱՄ-ի քանակի ընտրություն յուրաքանչյուր ստրատայում: Հետազոտվող տնային տնտեսություններն ընտրվել են ստրատիֆիկացված երկփուլանի պատահական ընտրանքի եղանակով: Ընտրանքի կիրառված մեթոդաբանությունը թույլ է

տվել ապահովել տվյալների վստահելի ներկայացուցչականություն Երևանի, առանձին-առանձին բոլոր մարզերի, և ընդամենը Հայաստանի մակարդակներով: Ընտրանքի փաստացի մեծությունը կազմել է 2000 տնային տնտեսություններ, որոնք ընդգրկված են Հայաստանի գրեթե բոլոր քաղաքային համայնքներով մեկ տարածված 200 ընտրանքի առաջնային միավորներում:

**Ընտրանքի ծավալի որոշումը Երևանում**

Ըստ վարչական վիճակագրության, 2010-ի տարեսկզբի դրությամբ Երևանում բազմաբնակարան շենքերի բնակարանների (առանց չսեփականաշնորհված հանրակացարանների) թվաքանակը կազմել է շուրջ 221 հազար, որը կազմում է հանրապետության բոլոր քաղաքների բնակարանների շուրջ 54.9 տոկոսը:

Ընդհանուր առմամբ, գլխավոր համակցության ստրատիֆիկացիայի համար ենթադրվել է, որ Երևանում բազմաբնակարան շենքերում բնակվող տնային տնտեսությունների ջեռուցման տարբերակների ընտրության վարքագիծը համեմատաբար առավել նման է, քան հանրապետության մյուս մարզերում և համայնքներում: Հետևաբար, յուրաքանչյուր տնային տնտեսություն Երևանում ներկայացնում է ավելի մեծ քանակի տնային տնտեսություններ, քան մարզերում:

Պատվիրատուի կողմից Ընտրանքի առաջարկվող նվազագույն ծավալը 2000 տնային տնտեսություն էր, որից ելնելով և նախագծվել է հետազոտության ընտրանքը: Տրված 2000 տնային տնտեսություններից բաղկացած ընտրանքային համակցությունը կառուցելիս՝ խնդիր է դրվել՝ Երևանին հատկացնել նվազագույն անհրաժեշտ ծավալ, որպեսզի մարզերում ապահովվեն հնարավոր առավելագույն դիտարկումներ:

**Աղյուսակ 1. Գլխավոր համակցություն, Երևանի և Մարզեր**

	Համայնքների քանակ	Բնակարանների քանակ	Տոկոսային կառուցվածք (տոկոս ընդամենի նկատմամբ)	Համամասնակ ան բաշխում, 2000 տ/տ ընտրանքի դեպքում	Առաջարկվող բաշխում, յուրաքանչյուր ստրատայում ԸԱՄ-ի 10 տո դեպքում
<b>Ք. Երևան, վարչական շրջաններ</b>	12	221040	54.90%	1098	700
<b>Մարզեր</b>	47	181603	45.10%	902	1300
<b>Ընդամենը</b>	<b>59</b>	<b>402,643</b>	<b>100.00%</b>	<b>2,000</b>	<b>2,000</b>

*Աղբյուրը՝ ՀՀ բնակարանային ֆոնդը և կոմունալ տնտեսությունը 2009 թվականին, ՀՀ ԱՎԾ 2010թ*

Համաձայն գլխավոր համակցության համամասնությունների ստրատիֆիկացման՝ ստացվում է, որ Երևանում անհրաժեշտ էր անցկացնել 1098 հարցում, իսկ մարզերում 902: Սակայն վերը շարադրված մոտեցումը կիրառելով՝ Երևանին հատկացվել է նվազագույն պահանջվող ընտրանքը՝ այն է 700 հարցում, և համապատասխանաբար մարզերում՝ 1300 հարցում:

Նշենք, որ նախկին հետազոտությունների ժամանակ, ՏՀՀ կենտրոնի կողմից Ջեռուցման տարբերակների ընտրության հետազոտության ընտրանքի պլանը կառուցելիս նույնպես չի կիրառվել գծային համամասնական մեթոդը<sup>2</sup>: Այս պարագայում, հիմնական հարցերի շուրջ Երևանում ստանդարտ սխալի առավելագույն չափը չի գերազանցել մարզերի ցուցանիշը:

Նման մոտեցումը հնարավորություն է տվել՝ մեծացնել առավել փոքր մարզերում տնային տնտեսությունների՝ հետազոտությունում ընդգրկման հնարավորությունը:

Ստորև ներկայացված է Երևանի 700 դիտարկում պարունակող ընտրանքի բաշխումը ըստ վարչական շրջանների:

<sup>2</sup> Տե՛ս «Ջերմամատակարարման իրավիճակի գնահատումը Հայաստանի քաղաքային բնակավայրերում» վիճակագրական ընտրանքային հետազոտության գեկոյցները, ՏՀՀԿ, www.edrc.am



**Աղյուսակ 2. Գլխավոր համակցությունը և ընտանքի բաշխումը Երևանի վարչական շրջաններում**

Երևանի վարչական շրջաններ	Բնակարանների քանակ	Կառուցվածք, տոկոս	Առաջարկվող բաշխում 700 տո դեպքում	Առաջարկվող բաշխում 700 տո յուրաքանչյուր ստրատայում ԸԱՄ-ի 10 տո դեպքում
Աջափնյակ	22,989	10.40%	72.80	70
Ավան	11,097	5.02%	35.14	40
Արաբկիր	33,124	14.99%	104.90	100
Դավթաշեն	8,996	4.07%	28.49	30
Էրեբունի	13,361	6.04%	42.31	40
Կենտրոն	28,720	12.99%	90.95	90
Մալաթիա-Սեբաստիա	26,996	12.21%	85.49	90
Նոր Նորք	35,288	15.96%	111.75	110
Նորք-Մարաշ	14	0.01%	0.04	0
Նուբարաշեն	1,149	0.52%	3.64	0
Շենգավիթ	23,499	10.63%	74.42	80
Քանաքեռ Զեյթուն	15,807	7.15%	50.06	50
<b>Ընդամենը</b>	<b>221,040</b>	<b>100%</b>	<b>700</b>	<b>700</b>

Աղբյուրը՝ ՀՀ բնակարանային ֆոնդը և կոմունալ տնտեսությունը 2009 թվականին, ՀՀ ԱՎԾ 2010թ

**Ընտրանքի ծավալի որոշումը մարզերում**

Հետազոտությամբ ստացված տվյալների տարածման և ներկայացուցչականության պահանջները վերաբերվում են ոչ միայն հանրապետական, այլև նաև մարզային մակարդակներին: Այսինքն, տվյալները պետք է ներկայացուցչական լինեն նաև յուրաքանչյուր մարզի համար: Յուրաքանչյուր մարզի համար գլխավոր համակցությունը տվյալ մարզի քաղաքային բնակավայրերի բազմաբնակարան շենքերում բնակվող բոլոր տնային տնտեսություններն են: Հնարավոր կլաստերային էֆեկտներից խուսափելու համար, և ընտրանքում առավելագույնս բոլոր տիպի տնային տնտեսությունների խմբերի ընդգրկման նույն հավանականության ապահովման խնդրից ելնելով՝ ընտրանքը կատարվել է ըստ ԸԱՄ: Ընդ որում, յուրաքանչյուր ԸԱՄ-ում տնային տնտեսությունների քանակը, հետազոտության առանձնահատկություններով պայմանավորված, սահմանվել է 10:

**Աղյուսակ 3. Ընտրանքի համամասնական բաշխումը և Հետազոտության ԸԱՄ քանակը ըստ մարզերի**

	Համայնքների քանակ	Բնակարանների քանակ	Բնակարանների տոկոսային կառուցվածք (տոկոս ընդամենի նկատմամբ)	Ընտրանքի համամասնական բաշխումը, 1300 տո	Առաջարկվող բաշխում 1300 տո, յուրաքանչյուր ստրատայում ԸԱՄ-ի 10 տո դեպքում
Կոտայք	7	39553	21.78%	283	280
Լոռի	8	37820	20.83%	271	270
Շիրակ	3	25774	14.19%	185	180
Սյունիք	7	20291	11.17%	145	150
Արմավիր	3	15326	8.44%	110	110
Արարատ	4	13663	7.52%	98	100
Գեղարքունիք	5	11557	6.36%	83	80
Տավուշ	5	8210	4.52%	59	60
Արագածոտն	3	4891	2.69%	35	40
Վայոց ձոր	3	4518	2.49%	32	30
<b>Ընդամենը</b>	<b>59</b>	<b>181,603</b>	<b>100%</b>	<b>1,300</b>	<b>1,300</b>

Աղբյուրը՝ ՀՀ բնակարանային ֆոնդը և կոմունալ տնտեսությունը 2009 թվականին, ՀՀ ԱՎԾ 2010թ

Նկատելք, որ գծային համամասնության խախտումը հանրապետական մակարդակում ցուցանիշների ստացման համար տվյալների վերակշռման անհրաժեշտություն է ենթադրել:

**Քաղաքների ընտրությունը**

Ընտրանքի հաջորդ փուլը ենթադրում է ԸԱՄ-ների ընտրությունը ըստ կլաստերների, որի արդյունքում որոշվում են հետազոտությունում ընդգրկված բնակավայրերը: ԸԱՄ-ի քանակը, ըստ բնակավայրերի, ինչպես և նախորդ հետազոտության ժամանակ, ընտրվել է՝ հիմնվելով հավանականային կշիռների վրա, սակայն այնպես, որ հետազոտությունում ընդգրկվեն հնարավորիս շատ քաղաքներ: Արդյունքում, ընտրանքում ընդգրկված է Հայաստանի 47 քաղաքներից 40-ը, իսկ Երևանի 12 վարչական շրջաններից 10-ը:

Ընտրանքում ընդգրկված չեն միայն շատ փոքր քաղաքները և Երևանի Նորք-Մարաշ և Նուբարաշեն վարչական շրջանները, որոնցում բազմաբնակարանային շենքերում բնակարանների թվաքանակն ունեցել է չափազանց փոքր կշիռ:

Ընտրված 40 քաղաքների, դրանցում ԸԱՄ քանակը և ընտրանքի չափը ներկայացված են Աղյուսակ 4-ում:

**Աղյուսակ 4. Հայաստանի քաղաքային բնակավայրերում բազմաբնակարան շենքերում տնային տնտեսությունների ընտրանքի չափաքանակները**

No	Մարզեր/Քաղաքներ	Բնակարանների ճշտված քանակ առ 01.01.2010-ի դրությամբ	Կառուցվածք, տոկոս մարզի մեջ	ԸԱՄ քանակ	Ընտրանքի քանակ
<b>1</b>	<b>Արագածոտն</b>	<b>4,891</b>	<b>100.0</b>	<b>4</b>	<b>40</b>
1	Աշտարակ	3,139	64.2	2	20
2	Թալին	947	19.4	1	10
3	Ապարան	805	16.5	1	10
	<b>Արարատ</b>	<b>13,663</b>	<b>100.0</b>	<b>10</b>	<b>100</b>
4	Արտաշատ	5,146	37.7	4	40
5	Մասիս	3,772	27.6	3	30
6	Արարատ	3,758	27.5	2	20
7	Վեդի	987	7.2	1	10
	<b>Արմավիր</b>	<b>15,326</b>	<b>100.0</b>	<b>11</b>	<b>110</b>
8	Վաղարշապատ	7,259	47.4	5	50
9	Արմավիր	5,318	34.7	4	40
10	Մեծամոր	2,749	17.9	2	20
	<b>Գեղարքունիք</b>	<b>10,848</b>	<b>100.0</b>	<b>8</b>	<b>80</b>
11	Ս-ան	5,624	51.8	4	40
12	Գավառ	2,600	24.0	2	20
13	Վարդենիս	1,558	14.4	1	10
14	Մարտունի	1,066	9.8	1	10
	<b>Լոռի</b>	<b>35,945</b>	<b>100.0</b>	<b>27</b>	<b>270</b>
15	Վանաձոր	26,536	73.8	20	200
16	Ալավերդի	5,644	15.7	3	30
17	Ստեփանավան	1,610	4.5	2	20
18	Տաշիր	1,114	3.1	1	10
19	Սպիտակ	1,041	2.9	1	10
	<b>Կոտայք</b>	<b>39,398</b>	<b>100.0</b>	<b>28</b>	<b>280</b>
20	Աբովյան	13,766	34.9	9	90
21	Հրազդան	12,484	31.7	9	90
22	Չարենցավան	7,847	19.9	5	50
23	ՆորՀաճն	2,215	5.6	2	20
24	Բյուրեղավան	2,126	5.4	2	20
25	Եղվարդ	960	2.4	1	10
	<b>Շիրակ</b>	<b>25,774</b>	<b>100.0</b>	<b>18</b>	<b>180</b>
26	Գյումրի	21,960	85.2	15	150
27	Արթիկ	2,932	11.4	2	20
28	Մարալիկ	882	3.4	1	10
	<b>Սյունիք</b>	<b>20,211</b>	<b>100.0</b>	<b>15</b>	<b>150</b>
29	Կապան	10,989	54.4	8	80
30	Գորիս	2,519	12.5	2	20
31	Սիսիան	2,492	12.3	2	20
32	Զաջարան	2,294	11.4	1	10
33	Ագարակ	1,191	5.9	1	10
34	Մեղրի	726	3.6	1	10
	<b>Վայոց Ձոր</b>	<b>4,518</b>	<b>100.0</b>	<b>3</b>	<b>30</b>
35	Ջերմուկ	2,080	46.0	1	10

36	Վայք	1,265	28.0	1	10
37	Եղեգնաձոր	1,173	26.0	1	10
	<b>Տավուշ</b>	<b>7,044</b>	<b>100.0</b>	<b>6</b>	<b>60</b>
38	Իջևան	3,489	49.5	3	30
39	Դիլիջան	2,798	39.7	2	20
40	Բերդ	757	10.7	1	10
<b>Ընդամենը ընտրված</b>		<b>177,618</b>	<b>-</b>	<b>130</b>	<b>1300</b>

**Հետազոտության դաշտային աշխատանքներն** իրականացվել են 2011 թվականի ապրիլ-մայիս ամիսներին՝ Հայաստանի բոլոր մարզերում: Հետազոտության անցկացման համար հարցազրուցավարներին են տրամադրվել առաջնային հասցեներ, ինչպես նաև, ռեզերվային հասցեներ, որոնք պետք է օգտագործվեն առաջնային հասցեներում հարցման իրականացման անհնարիության պարագայում:


Ռեզերվային հասցեների օգտագործման աստիճանը համեմատաբար բարձր է եղել Գեղարքունիքի, Շիրակի և Լոռու մարզերում, իսկ ամենացածր ցուցանիշը գրանցվել է Սյունիքի մարզում: Արդյունքում, նախատեսված քանակի SS հետազոտելու նպատակով կատարվել է շուրջ 2852 հասցեների այցելություն:

**Աղյուսակ 5. Ռեզերվային հասցեների օգտագործման աստիճանն ըստ մարզերի**

	Հիմնական հասցեների օգտագործում	Ռեզերվային հասցեների օգտագործում	Ընդամենը Հետազոտված SS	Ռեզերվային հասցեների օգտագործման աստիճան
Երևան	451	249	700	35.6
Արագածոտն	23	17	40	42.5
Արարատ	62	38	100	38.0
Արմավիր	60	50	110	45.5
Գեղարքունիք	31	49	80	61.3
Լոռի	134	136	270	50.4
Կոտայք	144	136	280	48.6
Շիրակ	84	96	180	53.3
Սյունիք	112	38	150	25.3
Վայոց Ձոր	16	14	30	46.7
Տավուշ	31	29	60	48.3
Ընդամենը	1148	852	2000	42.6

Նկատենք, որ գրեթե բոլոր մարզերում նկատվել է ռեզերվային հասցեների օգտագործման մակարդակի աճ: Եթե արդյունքները համեմատենք 2008-2009թթ. ջեռուցման սեզոնի նույն հետազոտության դաշտային աշխատանքների արդյունքների հետ, ապա հանրապետությունում ռեզերվային հասցեների օգտագործման մակարդակն աճել է 2.6 տոկոսային կետով, համեմատաբար մեծ աճեր են գրանցվել Լոռու, Շիրակի և Արարատի մարզերում:

**Գծապատկեր 1. Ռեզերվային հասցեների օգտագործման աստիճանն ըստ մարզերի 2008/2009 – 2010-2011 ջեռուցման սեզոնների համար**



**Հարցաթերթը**

Ինչպես արդեն նշվեց տվյալների հավաքագրման և հետազոտության իրականացման հիմնական գործիքը «Տնային տնտեսությունների Ջեռուցման տարբերակների վիճակագրական ընտրանքային հետազոտության» հարցաթերթն է:

Հարցաթերթի կառուցման համար օգտագործվել է ՏՀՀ կենտրոնի 2010-ին իրականացված «Հայաստանի քաղաքային բնակավայրերում ջերմամատակարարման իրավիճակի գնահատում» հետազոտության հարցաթերթը:

Հարցաթերթը ենթարկվել է որոշակի բարելավման: Բարելավման հիմքում ընկած են նախորդ հետազոտությունից քաղված դասերը:

Հարցաթերթը կառուցված է 9 առանձին բաժիններից, որոնք են՝

- Բաժին 1. Տնային տնտեսության անդամների ցուցակը
- Բաժին 2. Բնակարանային պայմաններ և համատիրություններ
- Բաժին 3. Ջեռուցվող մակերեսը
- Բաժին 4. Ջեռուցման և ջերմամատակարարման տեսակներ
- Բաժին 5. Ջեռուցման գնահատում և նախապատվություններ
- Բաժին 6. Տնային տնտեսության ծախսերը
- Բաժին 7. Ջեռուցման պայմանների պատճառով հիվանդությունները
- Բաժին 8. Բարեկեցության լրացուցիչ ցուցանիշներ
- Բաժին 9. Հարցագրուցվարի գնահատականներ

Հարցաթերթում հարցերի քանակը 70-ն է, որի արդյունքում միջին տնային տնտեսության համար հավաքագրվել են ավելի քան 200 տվյալներ:

Տվյալ հարցաթերթի միջոցով հավաքագրված տվյալների վերլուծությունը թույլ է տվել գնահատել հետազոտության հիմնական կախյալ փոփոխականները տարբեր տիպի ընտանիքների համար՝ ըստ ժողովրդագրական, զբաղվածության, կրթության, բարեկեցության, բնակարանային պայմանների, շենքի տեսակի և այլ հատկանիշների:

Հաշվի առնելով, որ ներկայացվող հարցաթերթով իրականացված հետազոտությունն ունեցել է գոհացուցիչ արդյունքներ, հարցաթերթի փորձարկման կարիք չի առաջացել:

Հարցաթերթը լիովին հնարավորություն է տվել ապահովել տվյալների համադրելիությունը նախորդ հետազոտությունների հետ:

## Հավելված 2. Վերլուծական աղյուսակներ

### Բաժին 1. Ձեռուցման տարբերակների վերլուծություն

Աղյուսակ 1.1. Ձեռուցման համար կիրառվող էներգիայի աղբյուրը SS-ներում, տոկոս

	2010-2011 ձմռանը		2009/2010 ձմռանը		2008/2009 ձմռանը	
	Հիմնական	Երկրորդային	Հիմնական	Երկրորդային	Հիմնական	Երկրորդային
Էլեկտրաէներգիա	22.8	15.0	22.0	15.6	21.6	20.5
Բնական գազ	69.8	6.6	70.9	5.7	72.5	5.2
Վառելիքայտ	5.3	1.0	4.2	1.0	3.9	1.7
Կենտրոնացված ջեռուցում	0.5	0.0	0.5	0.0	0.6	0.0
Այլ	1.0	1.1	0.3	1.1	0.6	2.7
Ընդամենը ջեռուցվող SS-ներ	99.4	23.7	98.0	23.4	97.6	30.1
Ընդամենը չջեռուցվող SS-ներ	0.6	76.3	2.0	76.6	2.4	69.9

Աղյուսակ 1.2. Ձեռուցման համար երկրորդային աղբյուրի կիրառումն ըստ հիմնական աղբյուրի 2010-2011 ձմռանը, տոկոս

Ձեռուցվող SS-ները ըստ հիմնական աղբյուրի	Չի կիրառվում	Կիրառվում է	Էլեկտրաէներգիա	Բնական գազ	Վառելիքայտ	Հեղուկ գազ	Այլ
Ընդամենը SS-ներ	59.5	40.5	26.1	11.0	1.7	0.7	1.0
Էլեկտրաէներգիա	47.8	52.2	0.0	45.7	2.6	3.5	0.4
Բնական գազ	63.5	36.5	33.9	0.0	1.5	0.0	1.1
Վառելիքայտ	52.3	47.7	24.5	20.2	0.0	0.0	3.0
Այլ	27.9	72.1	72.1	0.0	0.0	0.0	0.0

Աղյուսակ 1.3. Ընդհանրապես չջեռուցված SS-ներն ըստ մարզերի, տոկոս

	2010-2011 ձմռանը	2009/2010 ձմռանը	2008/2009 ձմռանը	2007/2008 ձմռանը	2006/2007 ձմռանը
Արագածոտն	0.0	4.0	3.8	4.2	2.5
Արարատ	0.0	0.0	0.0	1.5	1.0
Արմավիր	0.0	1.3	1.3	2.6	0.0
Գեղարքունիք	0.0	1.8	1.8	3.5	0.0
Լոռի	1.1	3.7	4.2	6.3	1.4
Կոտայք	0.4	1.5	0.5	3.6	1.1
Շիրակ	0.6	0.8	0.0	3.1	1.1
Սյունիք	0.7	2.0	0.0	1.0	0.7
Վայոց Ձոր	0.0	0.0	0.0	4.5	0.0
Տավուշ	0.0	2.5	0.0	2.4	0.0
Երևան	0.7	2.2	0.5	1.4	1.1
Հայաստան	0.6	2.0	0.9	2.4	1.0

Աղյուսակ 1.4. 2010-2011 ձմռանը ջեռուցման համար կիրառված էներգիայի հիմնական աղբյուրն ըստ մարզերի, տոկոս

	Էլեկտրաէներգիա	Բնական գազ	Վառելիքայտ	Այլ	Չի ջեռուցվում
Արագածոտն	10.0	85.0	2.5	2.5	0.0
Արարատ	12.0	81.0	6.0	1.0	0.0
Արմավիր	15.5	78.2	6.4	0.0	0.0
Գեղարքունիք	3.7	88.8	5.0	2.5	0.0
Լոռի	11.9	74.4	10.0	2.6	1.1
Կոտայք	17.9	73.6	6.8	1.4	0.4
Շիրակ	2.2	90.0	5.0	2.2	0.6
Սյունիք	28.0	59.3	11.3	0.7	0.7
Վայոց Ձոր	20.0	76.7	0.0	3.3	0.0
Տավուշ	16.7	61.7	21.7	0.0	0.0
Երևան	30.1	64.6	3.1	1.5	0.7
Հայաստան	22.8	69.8	5.3	1.5	0.6

**Աղյուսակ 1.5. Հիմնականում էլեկտրաէներգիայի միջոցով ջեռուցող SS-ների դիսամիկան ըստ մարզերի, տոկոս**

	2010-2011 ձմռանը	2009-2010 ձմռանը	2008-2009 ձմռանը	2007-2008 ձմռանը	2006-2007 ձմռանը
Արագածոտն	10.0	8.0	7.7	33.3	15.0
Արարատ	12.0	7.2	4.5	4.5	19.0
Արմավիր	15.5	14.5	9.1	10.5	25.5
Գեղարքունիք	3.7	1.8	1.8	1.8	5.0
Լոռի	11.9	12.0	12.0	13.1	9.3
Կոտայք	17.9	18.0	20.3	20.4	26.1
Շիրակ	2.2	3.1	3.1	5.5	3.9
Սյունիք	28.0	29.4	23.5	27.5	18.0
Վայոց Ձոր	20.0	18.2	18.2	27.3	20.0
Տավուշ	16.7	17.5	12.2	9.8	6.7
Երևան	30.1	28.7	29.1	32.1	50.9
Հայաստան	22.8	21.9	21.6	23.9	34.6

**Աղյուսակ 1.6. Հիմնականում բնական գազով ջեռուցող SS-ների դիսամիկան, ըստ մարզերի, տոկոս**

	2010-2011 ձմռանը	2009-2010 ձմռանը	2008-2009 ձմռանը	2007-2008 ձմռանը	2006-2007 ձմռանը
Արագածոտն	85.0	84.0	69.2	66.7	65.0
Արարատ	81.0	79.7	88.1	76.1	65.0
Արմավիր	78.2	77.6	87.0	84.2	64.5
Գեղարքունիք	88.8	89.3	89.5	87.7	88.8
Լոռի	74.4	77.5	72.3	68.6	70.4
Կոտայք	73.6	76.3	73.1	69.9	61.8
Շիրակ	90.0	91.3	88.2	81.1	85.0
Սյունիք	59.3	53.9	64.7	56.9	40.0
Վայոց Ձոր	76.7	72.7	77.3	59.1	70.0
Տավուշ	61.7	50.0	75.6	75.6	65.0
Երևան	64.6	66.5	68.4	63.4	41.3
Հայաստան	69.8	70.9	72.5	67.5	53.0

**Աղյուսակ 1.7. Հիմնականում վառելիքայտով ջեռուցող SS-ների դիսամիկան ըստ մարզերի, տոկոս**

	2010-2011 ձմռանը	2009-2010 ձմռանը	2008-2009 ձմռանը	2007-2008 ձմռանը	2006-2007 ձմռանը
Արագածոտն	2.5	0.0	3.8	4.2	10.0
Արարատ	6.0	11.6	7.5	14.9	11.0
Արմավիր	6.4	6.6	2.6	2.6	9.1
Գեղարքունիք	5.0	3.6	3.5	3.5	6.3
Լոռի	10.0	5.8	9.9	11.0	16.8
Կոտայք	6.8	4.1	5.1	5.1	9.6
Շիրակ	5.0	2.4	4.7	6.3	4.4
Սյունիք	11.3	14.7	11.8	14.7	40.0
Վայոց Ձոր	0.0	4.5	4.5	4.5	10.0
Տավուշ	21.7	30.0	12.2	12.2	28.3
Երևան	3.1	1.7	1.4	2.3	5.9
Հայաստան	5.3	4.2	3.9	5.0	9.8

**Աղյուսակ 1.8. Ջեռուցման համար կիրառվող էներգիայի հիմնական աղբյուրը բնական գազ ունեցող շենքերում ըստ մարզերի, տոկոս**

	Էլեկտրա- էներգիա	Բնական գազ	Վառելիփայտ	Կենտրոնացված ջեռուցում	Այլ	Չի շեռուցվում
Արագածոտն	10.0	85.0	2.5	0.0	2.5	0.0
Արարատ	12.1	80.8	6.1	0.0	1.0	0.0
Արմավիր	15.5	78.2	6.4	0.0	0.0	0.0
Գեղարքունիք	3.8	89.9	3.8	2.5	0.0	0.0
Լոռի	9.3	77.2	10.0	0.4	2.3	1.1
Կոտայք	16.7	75.1	6.3	0.0	1.5	0.4
Շիրակ	2.3	91.5	5.1	1.1	0.0	0.6
Սյունիք	22.2	65.9	11.1	0.0	0.0	0.7
Վայոց Ձոր	20.0	76.7	0.0	0.0	3.3	0.0
Տավուշ	16.9	62.7	20.3	0.0	0.0	0.0
Երևան	28.8	66.1	3.1	0.4	0.9	0.7
Հայաստան	21.4	71.6	5.1	0.4	1.0	0.6

**Աղյուսակ 1.9. Ջեռուցման համար կիրառվող էներգիայի հիմնական աղբյուրն ըստ շենքի տեսակի և բնակարանի սեփականության, տոկոս**

	Էլեկտրա- էներգիա	Բնական գազ	Վառելիփայտ	Այլ	Չի շեռուցվում
Քարե, ստալինյան նախագիծ	20.0	68.1	8.4	3.1	2.8
Քարե, խրուշչովյան նախագիծ	24.8	65.2	7.5	2.5	2.5
Քարե, այլ նախագիծ	20.8	71.8	5.4	1.2	0.3
Պանելային, խրուշչովյան նախագիծ	21.0	72.0	5.2	1.8	1.8
Պանելային, այլ նախագիծ	24.7	70.0	3.6	0.9	0.6
Մոնոլիտ	23.6	63.7	6.5	6.2	2.1
Այլ նախագիծ	24.7	62.7	12.6	0.0	-
Բնակարանը սեփական է	19.9	72.9	5.2	1.4	0.7
Բնակարանը վարձակալված է	53.7	41.1	2.3	3.0	0.0
Սեփական չէ և վարձակալված չէ	45.1	41.4	11.5	2.1	0.0

**Աղյուսակ 1.10. Ջեռուցման համար կիրառվող էներգիայի հիմնական աղբյուրն ըստ շենքի հարկայնության, Հայաստանում, մարզերում և Երևանում, տոկոս**

	Էլեկտրա- էներգիա	Բնական գազ	Վառելիփայտ	Այլ	Չի շեռուցվում
Մինչև 4 հարկանի	22.1	65.6	9.6	1.9	0.8
5 հարկանի	20.2	72.5	5.5	1.4	0.3
6-8 հարկանի	30.9	62.3	4.0	0.0	2.8
9 հարկանի	23.2	71.0	3.3	1.9	0.6
10 և բարձր հարկանի	32.1	65.0	1.2	0.8	0.8
Ընդամենը Հայաստան	22.8	69.8	5.3	1.5	0.6
Մինչև 4 հարկանի	11.9	74.1	11.3	2.1	0.6
5 հարկանի	13.5	77.7	6.8	1.4	0.6
6-8 հարկանի	0.0	83.8	16.2	0.0	0.0
9 հարկանի	19.2	74.1	5.3	1.5	0.0
10 և բարձր հարկանի	0.0	89.8	10.2	0.0	0.0
Ընդամենը մարզեր, առանց Երևանի	13.8	76.3	7.9	1.6	0.5
Մինչև 4 հարկանի	42.5	48.8	6.3	1.3	1.3
5 հարկանի	29.4	65.5	3.8	1.3	0.0
6-8 հարկանի	33.3	60.6	3.0	0.0	3.0
9 հարկանի	24.8	69.7	2.5	2.2	0.8
10 և բարձր հարկանի	33.3	64.0	0.9	0.9	0.9
Երևան	30.1	64.6	3.1	1.5	0.7



**Աղյուսակ 1.11. Ջեռուցման համար կիրառվող էներգիայի հիմնական աղբյուրն ըստ բնակարանի սենյակների թվի, տոկոս**

	Էլեկտրա-էներգիա	Բնական գազ	Վառելափայտ	Այլ	Զի ջեռուցվում
1 սենյակ	33.0	52.4	10.8	3.2	0.5
2 սենյակ	26.0	66.8	5.5	1.3	0.4
3 սենյակ	18.3	75.8	3.8	1.1	0.9
4 սենյակ	17.5	77.7	3.2	1.5	0.0
5 և ավելի սենյակ	0.0	92.1	7.9	0.0	0.0

**Աղյուսակ 1.12. Ջեռուցման համար կիրառվող էներգիայի հիմնական աղբյուրը ըստ բնակարանի ընդհանուր վիճակի հարցազրուցավարի գնահատականի, տոկոս**

	Էլեկտրա-էներգիա	Բնական գազ	Վառելափայտ	Այլ	Զի ջեռուցվում
Շատ վատ	22.7	48.1	18.9	7.8	2.5
Վատ	29.2	58.8	9.9	1.6	0.5
Լավ	22.1	73.5	3.0	0.8	0.6
Շատ Լավ	11.8	84.7	1.0	2.5	0.0

**Աղյուսակ 1.13. Ջեռուցման համար կիրառվող էներգիայի հիմնական աղբյուրն ըստ բնակարանի պատուհանների ընդհանուր վիճակի, տոկոս**

	Էլեկտրաէներգիա	Բնական գազ	Վառելափայտ	Այլ	Զի ջեռուցվում
Լավ վիճակում	14.4	82.5	1.1	1.3	0.7
Միջին վիճակում	26.0	67.6	4.6	1.5	0.3
Վատ վիճակում	26.7	56.5	13.6	1.7	1.5

**Աղյուսակ 1.14. Ջեռուցման համար կիրառվող էներգիայի հիմնական աղբյուրն ըստ SS-ի ամսական եկամտի գնահատականի, տոկոս**

	Էլեկտրա-էներգիա	Բնական գազ	Վառելափայտ	Այլ	Զի ջեռուցվում
1001 և ավելի ԱՄՆ դոլար	10.9	85.3	1.8	2.1	0.0
601-ից 1000 ԱՄՆ դոլար	23.8	74.0	1.2	1.1	0.0
301-ից 600 ԱՄՆ դոլար	23.7	73.7	1.6	0.7	0.2
101-ից 300 ԱՄՆ դոլար	24.6	67.4	5.6	1.6	0.7
մինչև 100 ԱՄՆ դոլար	16.1	54.4	22.8	4.2	2.4

**Աղյուսակ 1.15. Ջեռուցման համար կիրառվող էներգիայի հիմնական աղբյուրն ըստ SS-ի բարեկեցության գնահատականների, տոկոս**

	Էլեկտրա-էներգիա	Բնական գազ	Վառելափայտ	Այլ	Զի ջեռուցվում
<i>Ըստ SS գլխավորի սուբյեկտիվ գնահատականի</i>					
Ծայրահեղ աղքատ	26.3	37.9	29.3	2.2	4.3
Աղքատ	22.2	62.6	11.4	3.3	0.5
Ոչ աղքատ	24.5	71.7	2.7	0.7	0.5
Ապահովված	13.2	83.4	1.3	1.8	0.3
<i>Ըստ SS հարցազրուցավարի սուբյեկտիվ գնահատականի</i>					
Ծայրահեղ աղքատ	23.7	41.7	26.6	4.1	3.9
Աղքատ	22.1	58.6	14.2	4.4	0.8
Ոչ աղքատ	25.4	70.7	2.9	0.6	0.5
Ապահովված	11.4	86.0	0.7	1.6	0.2

**Աղյուսակ 1.16. Ջեռուցման համար կիրառվող էներգիայի հիմնական աղբյուրն ըստ քվանտիլային խմբերի, տոկոս**

	Էլեկտրաէներգիա	Բնական գազ	Վառելափայտ	Այլ	Զի ջեռուցվում
Քվանտիլ 1	21.2	52.7	17.9	5.1	3.1
Քվանտիլ 2	27.1	68.9	3.3	0.7	0.0
Քվանտիլ 3	24.2	71.6	3.5	0.5	0.2
Քվանտիլ 4	25.5	72.2	1.8	1.0	0.0
Քվանտիլ 5	15.8	81.9	1.0	2.6	0.0

**Աղյուսակ 1.17. Ձեռուցման համար կիրառվող հիմնական սարքերը, տոկոս**

	2010-2011 ձմռանը			2009-2010 ձմռանը		
	Հայաստան	Երևան	Մարզեր	Հայաստան	Երևան	Մարզեր
Ինքնաշեն գազի վառարան	1.3	0.4	2.3	0.9	0.0	1.9
Գործարանային արտադրության գազի վառարան	38.6	24.6	55.6	39.4	26.0	56.5
Ձեռուցման անհատական կաթսա	28.1	38.1	15.9	27.4	37.7	14.7
Գազօջախ	2.2	1.7	2.9	4.3	4.0	4.3
Ոչ գործարանային էլեկտրական սարքեր	10.5	15.0	5.1	11.5	15.9	6.0
Գործ. էլեկտր. սարքեր (վառարան, փչող սարք կամ յուղային մարտկոց)	11.7	14.3	8.4	10.5	13.2	7.8
Փայտի վառարան	5.5	3.4	8.0	4.1	1.6	7.2
Այլ	2.1	2.3	1.9	1.8	1.7	1.5

**Աղյուսակ 1.18. Ձեռուցման համար կիրառվող հիմնական սարքերն ըստ էներգիայի աղբյուրի, տոկոս**

	Էլեկտրա-էներգիա	Բնական գազ	Վառելիքայտ	Կենտրոնացված ջեռուցում	Այլ
Ինքնաշեն գազի վառարան	0.0	1.8	0.0	0.0	0.0
